Azg
armenian daily

4 ՅՈՒՆԻՍ 1997 ՇՈՐԵՔՇԱԲԹԻ #102 (1356)

Սիրիան բացում է Իրաքի հետ սահմանը

ԴԱՄԱՍԿՈՍ, 3 ՀՈՒՆԻՍ, ԱՐՄԵՆՊՐԵՍ-ՈՌՅԹԵՐ՝ Սիրիացի բարձրաստիճան մի պաշտոնատար հաղորդել է, որ հունիսի 2-ին Սիրիայի սահմանադրական ուժերը վերաբացել են 1980-ական թվականներից ի վեր փակ Իրաքի հետ սահմանը՝ եւս մեկ քայլ անելով երկկողմ հարաբերությունների կարգավորման ուղղությամբ: Իրաքյան մի պատվիրակություն այս շաբաթվա վերջին պետք է այցելի Սիրիա՝ առեւտրական հարցերի շուրջ բանակցելու: Սահմանը վերաբացելու որոշումը կայացվել էր անցյալ ամիս, երբ Սիրիայի բարձրաստիճան պատվիրակությունը վերջին 16 տարիների ընթացքում առաջին անգամ այցելել էր Բաղդադ:

ՆԱՏՕ-ն ուժեղացնելու է ճնշումը Բոսնիայի հակամարտող կողմերի վրա

3 ՀՈՒՆԻՍ, «ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ»՝ Եվրոպայում ՆԱՏՕ-ի ուժերի գլխավոր հրամանատար գեներալ Ջորջ Ջոուլվենը Բուդապեշտում ասաց, թե ՆԱՏՕ-ն լրացուցիչ ճնշում է գործադրելու Բոսնիայի հակամարտող կողմերի վրա՝ նրանցից պահանջելով իրագործել Դեյթոնի խաղաղության պայմանագիրը: Ջոուլվենը, որը հուլիսի 10-ին ազատելու է պաշտոնը, այժմ այցելում է եվրոպական մայրաքաղաքներ: Այսօր Բուդապեշտում նա «Պատվո շքանշան» ստացավ:

«ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ»

Համանախագահները Ղարաբաղին առաջարկում են ազատել նաեւ Շուշիի շրջանը

Բանակը առայժմ մնում է, հետագայում վերածվելով սոսկ ռազմականացված ոստիկանության

ԲԱՔՈՒ, 3 ՀՈՒՆԻՍ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ՝ Ինչպես հաղորդվել է, ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահները, տարածաշրջան այցելելիս, հակամարտության կողմերին են հանձնել նոր առաջարկներ ղարաբաղյան խնդրի կարգավորման վերաբերյալ, որոնց բովանդակությունը գաղտնի էր պահվում: Այժմ հայտնի են դարձել որոշ մանրամասներ:

Ղարաբաղյան հակամարտության կարգավորմանն ուղղված ԵԱՀԿ Մինսկի խորհրդաժողովի նոր առաջարկներով հայկական կողմին առաջարկվում է ազատել ավելի վաղ գրաված հողերը ոչ միայն Լեռնային Ղարաբաղի նախկին ինքնավար մարզի սահմաններից դուրս (Քելբաջարի, Աղդամի, Ֆիզուլու, Ջեբրայիլի, Զանգելանի, Կուբաթլիի, Լաչինի շրջաններ), այլ նաեւ Լեռնային Ղարաբաղի Շուշիի շրջանը: Բաքուն իր հերթին, պետք է համաձայնի Լեռնային Ղարաբաղի զինված ուժերի պահպանմանը: Այդ դեպքում միջնորդները «երաշխավորում են խիստ միջազգային-վերահսկողություն եւ ռազմական տիպնիկայի հաշվառում», որ գտնվում է ԼՂՀ տարածքում: Այս մասին հաղորդում է «Ինտերֆաքս»-գործակալությունը՝ վկայակոչելով Բաքվի դիվանագիտական աղբյուրներ:

Միաժամանակ նշված է, որ դարաբաղցի հայերի սոյառազինությունը այդ դեպքում կենտրոնվի Եվրոպայում տվյալ զինված ուժերի մասին պայմանագրի համաձայն Հայաստանի էվոտաներում: Առաջարկվող ալեռարով ասել է արբեջանցի դիվանագետը, հայկական կողմի ազատած տարածքներում կտեղակայվի ԵԱՀԿ խաղաղապահ կազմ, եւ նեղկայացված կլինեն միջազգային կազմակերպությունը, ԱՄՆ-ը եւ Եվրոպայի երկրները:



Սակայն, այս կամ այն երկրի ներկայացուցչության կոնկրետ մասնաբաժինը եւ խաղաղապահ կազմի ընդհանուր քանակությունը կորոշվեն ավելի ուշ, եթե կողմերն ընդունեն տվյալ տարբերակը: Ըստ նույն աղբյուրի, այդ ուժերը դասակարգ եւ նեղկայացված կլինեն միայն ասստանը: ԱՄՆ-ը եւ Եվրոպայի երկրները:

Սակայն, այս կամ այն երկրի ներկայացուցչության կոնկրետ մասնաբաժինը եւ խաղաղապահ կազմի ընդհանուր քանակությունը կորոշվեն ավելի ուշ, եթե կողմերն ընդունեն տվյալ տարբերակը: Ըստ նույն աղբյուրի, այդ ուժերը դասակարգվելու կլինեն ազատագրվող տարածքներ ադրբեջանցի փախստականների վերադառնալու գործընթացի անվտանգության համար եւ միաժամանակ կկատարեն Լեռնային Ղարաբաղի բնակչության անվտանգության երաշխավորի ֆունկցիաներ: ԵԱՀԿ ՄԽ առաջարկության համաձայն, փախստականների ե սիրողական վերաբնակիչների վերադարձից հետո կկազմավորվի տարածաշրջանի էներգատրանսպորտային հաղորդակցությունների աշխատանքը: Մասնավորապես, միջազգային ուժերը դարձյալ կլինեն ադահովելու «Լաչինի միջանցքի» գործառնությունը, որը միակ ճանապարհն է, որ Հայաստանի հետ է կապում Լեռնային Ղարաբաղը Լաչինի տարածքով:

Այս գործընթացներին զուգահեռ Բաքուն եւ Ստեփանակերտը դարձավոր կլինեն բանակցություններ վարել Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի վերաբերյալ: Կարգավիճակը այդ նույն աղբյուրի համաձայն, կարող է լինել առավելագույնս բարձր, բայց անկախ կարգավիճակից զարգ: Սրա հետ մեկտեղ առանձին փուլերում այդ բանակցություններին կարող են միանալ միջազգային միջնորդները, ինչպես նաեւ որոշ այլ դերակատարներ: «Բանակցությունների ավարտից եւ Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի մասին հարցի վերջնական լուծումից հետո Լեռնային Ղարաբաղի ռազմական ստորաբաժանումները կրճատվում են մինչեւ նվազագույն բավարարման մակարդակի վերածվելով, ըստ էության, ռազմականացված ոստիկանության»:

ՖՐԱՆՍԻԱ

Վարչապետ Լիոնել Ժոսպենը եւ իր 15 նախարարները

3 ՀՈՒՆԻՍ, RFI, BBC՝ Ֆրանսիայի նոր վարչապետ Լիոնել Ժոսպենը ձեռնամուխ եղավ իր պաշտոնական պարտականությունների կատարմանը: Նախկին վարչապետ Ալեն Ժյուպեի հետ ունեցած կարճատեւ հանդիպումից հետո նա իսկույն եւեթ սկսեց կազմավորել նոր կառավարությունը, որի կազմում կլինեն 15 նախարարներ: Մինչեւ վարչապետից՝ վարչապետ իրավասությունների հանձնման արարողության անցկացումը, Լիոնել Ժոսպենը բանակցեց կոմկուսի առաջնորդ Ռոբեր Հյուի հետ՝ քննարկելով կառավարությանը կոմունիստներ անդամակցելու հարցը: Կոմկուսի [illegible] ղեկավարությունը երեկ սոցիալ [illegible] տարածեց [illegible] իրագործ[illegible]ական արտավի ընթացքում տրված խոստումները՝ մասնավորապես բարձրացնել նվազագույն աշխատավարձը 500 ֆրանկով (խոսացված հազարի փոխարեն), փոխարինել ավելացված արժեքի հարկը եւ անցկացնել միջոցառումներ հոգուս փոխ ձեռնարկությունների: Սոցկուսակցության մի շարք առաջնորդներ արտահայտվեցին կոմունիստների կառավարության կազմում մի քանի տեղեր տրամադրելու օգտին, քանի որ սոցիալիստներն առանց կոմունիստների հետ դաշինք կազմելու խորհրդարանում ձայների բացարձակ մեծամասնություն չեն կարող ունենալ:

Շվեդական Մալմյո քաղաքում հինգշաբթի եւ ուրբաթ օրերին տեղի կունենա կառավարություններ կամ կուսակցություններ գլխավորող սոցիալիստների եւ սոցիալ դեմոկրատների համաժողով, որին կմասնակցի նոր վարչապետ Լիոնել Ժոսպենը: Դա կլինի նրա՝ որպես Ֆրանսիայի կառավարության ղեկավարի առաջին արտասահմանյան ուղեւորությունը: Բացի այդ, Ժոսպենը հայտնեց, որ նախագահ Շիրակի հետ մտադիր է մասնակցել բոլոր գագաթաժողովներին:

Թուրքիայի նախագահությանն է զորքերի անվերադարձ դուրսբերումը

ԱՆԿԱՐԱ, 3 ՀՈՒՆԻՍ, ԱՐՄԵՆՊՐԵՍ՝ Թուրքիան պաշտպանում է Լեռնային Ղարաբաղի տեւական հակամարտության կարգավորման եւ Անդրկովկասի այս շրջանում խաղաղության շուտափույթ հաստատման նոր նախաձեռնությունները: Այդ մասին, ըստ ԻՏԱՐ-ՏԱՍՍ-ի, Անկարայում հայտարարել է Թուրքիայի դիվանագիտության ղեկավար Թանսու Չիլլերը՝ ԱՄՆ-ի պետքարտուղարի առաջին տեղակալ Սթրոբ Թալբոթի հետ կայացած հանդիպման ժամանակ, որը կիրակի երեկոյան Թուրքիայի մայրաքաղաք է ժամանել Լեռնային Ղարաբաղի խնդրով Եվրակազմակերպության Մինսկի խմբի համանախագահների պատվիրակության կազմում:

Չիլլերի խոսքերով, Ղարաբաղի հակամարտության կարգավորման եւ այս ուղղությամբ նոր նախաձեռնության իրականացման հարցում առաջատար դեր է տրվում ԱՄՆ-ին, Ֆրանսիային եւ Ռուսաստանին: Հակամարտության լուծումը Թուրքիայի արտգործնախարարությունը տեսնում է տարածաշրջանից հայկական զորքերի անվերադարձ դուրսբերման եւ գաղթականների հիմնախնդրի կարգավորման մեջ: Անկարայի պաշտոնական ներկայացուցիչների բազմիցս արած հայտարարությունների համաձայն, միայն դրանից հետո Թուրքիայի եւ Հայաստանի միջեւ կհաստատվեն դիվանագիտական հարաբերություններ:

Էրբաքանը Չիլլերին է հանձնում արհեստակցական միության նվիրած գաղը Անկարայում: վարչապետի գրասենյակում: Էրբաքանն անցյալ շաբաթվա վերջին հայտարարեց վաղաժամ ընտրությունների դիմելու իր մտադրության մասին՝ հաղթահարելու համար իսլամիստների գործունեության աշխուժացման հետեւանքով խորհրդարանում եւ կոալիցիոն կառավարությունում ստեղծված տագնապը: Ընտրությունների համար դեռեւս ժամկետ ճշված չէ:

ՌՈՅԹԵՐ ԱՐՄԵՆՊՐԵՍ

Թոնի Բլերը՝ սոցիալական բարեփոխիչ

3 ՀՈՒՆԻՍ, BBC՝ Մեծ Բրիտանիայի վարչապետ Թոնի Բլերը վարչապետական իր առաջին քաղաքական ելույթում կոչ արեց արմատապես փոփոխել նոպասների չափերը եւ դրանք տրամադրելու կանոնները, որպեսզի չաշխատողներն ավելի ակտիվորեն աշխատանք փնտրեն: Նրա խոսքերով, երկրում չպետք է լինեն մոռացված մարդիկ եւ սոցիալական ապահովությունն իր կառավարման ժամանակ բարեփոխումների է ենթարկվելու:

Շիմոն Պերեսին կփոխարինի Բարաքը

3 ՀՈՒՆԻՍ, RFI՝ Իսրայելում ձախակողմյան «Աշխատանքի կուսակցության» ակտիվիստները այսօր ընտրելու են նոր առաջնորդ: 73-ամյա Շիմոն Պերեսը չի առաջադրել իր թեկնածությունը: Մեկնաբանների կարծիքով «Աշխատանքի կուսակցության» նոր առաջնորդ կդառնա կուսակցության աջ թեւի ներկայացուցիչ, 54-ամյա Յիխուդ Բարաքը:

ՇՐՋԱՆ

Թուրք-իրանական հարաբերությունները կարեւորվում են Հայաստանի համար

ՀԱԿՈԲ ՉԱԲԲՈՅԱՆ
«Ազգի» քաղաքական մեկնաբան

Հայաստանի հարեւանների մեջ առանձնակի նշանակությամբ կարեւորվում են Իրանն ու Թուրքիան: Նրանց նշանակությունը մեր հանրապետության համար առավելագույն դրսեւորում է ստանում արտաքին աշխարհի հետ կապի առումով: Գաղտնիք չէ, որ Թուրքիան Հայաստանին Արեւմուտքի հետ կապող թերեւս ամենակարճ ճանապարհն է: Իսկ Իրանը նրան դուրս է բերում Միջին Արեւելք: Սա այս դպրոցականներում Հայաստանի համար շատ զանգ կարեւոր նշանակություն են ձեռք բերում թուրք-իրանական հարաբերությունները:

Թուրքիան այն երկրներից է, որ տարածքային խնդիրներ ունի գրեթե բոլոր հարեւանների հետ: Թերեւս Իրանը բացառություն է կազմում: Ավելին, Իրանի Իսլամական Հանրապետությունը: Թուրքիայում իշխանությունը Թանսու Չիլլերի «Ճշմարիտ ուղի» կուսակցության հետ կիսում է Նեջմեթթին Էրբաքանի «Բարգավաճում» կուսակցությունը: Իսլամականության հանգամանքը, սակայն, ամենեւին չի հանգեցնում թուրք-իրանական հարաբերությունների կարգավորմանը: Ընդհակառակը, «Բարգավաճում» կուսակցությունը լինելով իսլամական, Թուրքիայում ոգեւորում է իսլամ արմատականներին: Թուրքական զինված ուժերը, որոնց աշխարհիկ հարեւանական կարգերի երաշխավորը իշխում են քաղաքականության ասպարեզում: Իսլամ արմատականների վերելքի դրսեւորումներ նրանք ոչ միայն վերահսկություն են սահմանում գործադիր իշխանության գործունեության վրա, այլեւ իրենց ձեռքն են վերցնում դեռեւս արտաքին քաղաքականության նախաձեռնությունը: Ստացվում է այնպես, որ թուրքական զինված ուժերը, տիրանալով երկրի ներքին եւ արտաքին խնդիրների նախաձեռնությանը, միաժամանակ երաշխավորում են Թուրքիայի արեւմտյան կողմնորոշումը: Փաստորեն այդ կողմնորոշումն էլ դրվում է թուրք-իրանական հարաբերությունների հիմքում: Երկու երկրների միջեւ տարածքային խնդիրների բացակայությամբ հանդերձ, հանկարծ ստիպում են նրանց փոխհարաբերություններ թերեւս դրանով էլ հերքական անգամ ընդգծվում է Միջին Արեւելքի մասնատվածությունը ի դեմս ԱՄՆ-ի դաշնակիցների եւ հակառակորդների:

Տես էջ 2

ԱԶԳ

տեղական

Երեկ ԱԳՆ խոսնակ Արսեն Գասպարյանի հրավիրած մամուլի ասուլիսը նվիրված էր մայիսի 30-ին Պորտուգալիայի Սինտրա քաղաքում կայացած Հյուսիսատլանտյան համագործակցության խորհրդի ԱԳ նախարարների հերթական հանդիպմանը: Ասուլիսի սկզբում խոսնակը նախ ընդգծեց, որ շուտով ղեկավարելու է համապատասխան փաստաթուղթ, որով այսուհետև կանոնակարգվելու են ԱԳՆ-ի եւ ՉԼՄ ներկայացուցիչների հարաբերությունները: Անդրադառնալով նախարարական հանդիպմանը, նա նշեց, որ հիմնական աղյուսը Եվրասիական գործակցության խորհրդի (ԵԱԳԽ) հիմնադրումն էր որը ՆԱՏՕ-ի եւ գործընկեր պետությունների համագործակցության նոր մեխանիզմ է: Այն հիմնվում է երկու սկզբունքի ներգրավման շնորհիվ հնարավորությունների եւ յուրաքանչյուր պետության կողմից իր մասնակցության չափը որոշելու իմաստի վրա: Այդպիսով ԵԱԳԽ-ն համախմբելու է նախկին ՀԱՀԽ-ի քաղաքական հարթությունն ու «Գործընկերություն հանուն խաղաղության» ծրագրով նախատեսված նյութական գործունեությունը, ստեղծվում է ԵԱԳԽ-ն ՆԱՏՕ-ի եւ գործընկեր պետությունների միջեւ ուղիղ քաղաքական հարաբերությունների եւ խորհրդատվության մեխանիզմ, որով գործընկեր պետություններին հնարավորություն է տրվում մասնակցելու ՆԱՏՕ-ի որոշումների կայացմանը, ինչպես նաեւ որոշ կարգային ներկայություն ունենալու ՆԱՏՕ-ի տարբեր կառույցներում:

ԵԱԳԽ-ն հիմնարար փաստաթուղթ ընդունելուց հետո ՀԱՀԽ նախարարական հանդիպումը կարճատեւ ընդմիջումից հետո վերսկսվել է որպես ԵԱԳԽ ԱԳ նախարարների առաջին հանդիպում:

Հանդիպմանը ելույթով հանդես է եկել նաեւ ՀՀ ԱԳ նախարար Ալեքսանդր Արզումանյանը, որն անդրադարձել է եվրոպական անվտանգության առանցքային խնդիրներին, Հայաստանի կողմից վերահաստատել ոչիական անվտանգության կառույցներն ընտրելու կամ դրանք փոփոխելու ցանկացած երկրի իրավունքը, մասնավորապես որ որեւէ երկրի անվտանգություն չի կարող առյահովվել այլ երկրի անվտանգության հաշվին: Միաժամանակ նախարարը նշել է, որ եվրոպական ընդհանուր եւ համապատասխան անվտանգության ոլորտում ԵԱԳԽ բոլոր պետությունների պատասխանատվությունն է: Կարեւորագույն իրադարձություն համարելով ՆԱՏՕ-ի եւ Ռուսաստանի փոխհարաբերությունների մասին հիմնարար փաստաթղթի ստորագրումը նա նշել է, որ ՆԱՏՕ-Ռուսաստան քաղաքական երկխոսությունը կիսաբանի հանձնաժողովական անվտանգության նոր կառույցի ձեւավորումը:

ՀՀ ԱԳ նախարարը անդրադարձել է նաեւ Հայաստանի անվտանգության հիմնախնդիրներին ու մտահոգություններին, ներկայացրել Հայաստանի սպառազինությունների վերահսկման եւ զինաթափման օրակարգն ու մասնավորապես Վիեննայում շարունակվող եվրոդայում սովորական զինված ուժերի դայմանագրի արդիականացման բանակցություններում Հայաստանի խնդիրները: Խոսելով Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման մասին, նա վերահաստատել է հրադադարը դահպանելու Հայաստանի վճռականությունը եւ ներկայացրել ԼՂ անվտանգության վերաբերյալ Հայաստանի դիրքորոշումը: Նա շեշտել է, որ ԼՂ ժողովրդի ֆիզիկական գոյությունը ճակատագիրն իմքնուրույն տնօրինելու իրավունքը, արտաքին աշխարհի հետ ազատ եւ անարգել կապն ու դա մանագրային դարավորությունների վրա հիմնված անվտանգության միջոցառումներ ԼՂ անվտանգության այն առանցքային տարրերն են, որոնք դեռ է հիմք հանդիսանան քաղաքական գործընթացի զարգացման համար: Պարոն Արզումանյանը նշել է, որ Հայաստանը շահագրգռված է ընդլայնելու եւ խորացնելու ՆԱՏՕ-ի եւ նրա անդամների հետ իր հարաբերությունները:

ԵԱԳԽ երկրորդ նախագահության հանդիպումը pas ԱԳ նախարարների որոշման հրավիրվելու է Բրյուսելում 1997 թ դեկտեմբերի 17-ին:

ԱՐԱՔՍ ՄԱՔԱՐՅԱՆ

ԱՄՈՒԼԻՍ

Հայաստանը շահագրգիռ է ընդլայնելու ՆԱՏՕ-ի հետ իր հարաբերությունները

կայացուցիչների հարաբերությունները: Անդրադառնալով նախարարական հանդիպմանը, նա նշեց, որ հիմնական աղյուսը Եվրասիական գործակցության խորհրդի (ԵԱԳԽ) հիմնադրումն էր որը ՆԱՏՕ-ի եւ գործընկեր պետությունների համագործակցության նոր մեխանիզմ է: Այն հիմնվում է երկու սկզբունքի ներգրավման շնորհիվ հնարավորությունների եւ յուրաքանչյուր պետության կողմից իր մասնակցության չափը որոշելու իմաստի վրա: Այդպիսով ԵԱԳԽ-ն համախմբելու է նախկին ՀԱՀԽ-ի քաղաքական հարթությունն ու «Գործընկերություն հանուն խաղաղության» ծրագրով նախատեսված նյութական գործունեությունը, ստեղծվում է ԵԱԳԽ-ն ՆԱՏՕ-ի եւ գործընկեր պետությունների միջեւ ուղիղ քաղաքական հարաբերությունների եւ խորհրդատվության մեխանիզմ, որով գործընկեր պետություններին հնարավորություն է տրվում մասնակցելու ՆԱՏՕ-ի որոշ

քաղաքական անվտանգության առանցքային խնդիրներին, Հայաստանի կողմից վերահաստատել ոչիական անվտանգության կառույցներն ընտրելու կամ դրանք փոփոխելու ցանկացած երկրի իրավունքը, մասնավորապես որ որեւէ երկրի անվտանգություն չի կարող առյահովվել այլ երկրի անվտանգության հաշվին: Միաժամանակ նախարարը նշել է, որ եվրոդական ընդհանուր եւ համապատասխան անվտանգության դահպանումը ԵԱԳԽ բոլոր պետությունների դատասխանատվությունն է: Կարեւորագույն իրադարձություն համարելով ՆԱՏՕ-ի եւ Ռուսաստանի փոխհարաբերությունների մասին հիմնարար փաստաթղթի ստորագրումը նա նշել է, որ ՆԱՏՕ-Ռուսաստան քաղաքական երկխոսությունը կիսաբանի հանձնաժողովական անվտանգության նոր կառույցի ձեւավորումը:

ՀՀ ԱԳ նախարարը անդրադարձել է նաեւ Հայաստանի անվտանգության հիմնախնդիրներին ու մտահոգություններին, ներկայացրել Հայաստանի սպառազինությունների վերահսկման եւ զինաթափման օրակարգն ու մասնավորապես Վիեննայում շարունակվող եվրոդայում սովորական զինված ուժերի դայմանագրի արդիականացման բանակցություններում Հայաստանի խնդիրները: Խոսելով Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման մասին, նա վերահաստատել է հրադադարը դահպանելու Հայաստանի վճռականությունը եւ ներկայացրել ԼՂ անվտանգության վերաբերյալ Հայաստանի դիրքորոշումը: Նա շեշտել է, որ ԼՂ ժողովրդի ֆիզիկական գոյությունը ճակատագիրն իմքնուրույն տնօրինելու իրավունքը, արտաքին աշխարհի հետ ազատ եւ անարգել կապն ու դա մանագրային դարավորությունների վրա հիմնված անվտանգության միջոցառումներ ԼՂ անվտանգության այն առանցքային տարրերն են, որոնք դեռ է հիմք հանդիսանան քաղաքական գործընթացի զարգացման համար: Պարոն Արզումանյանը նշել է, որ Հայաստանը շահագրգռված է ընդլայնելու եւ խորացնելու ՆԱՏՕ-ի եւ նրա անդամների հետ իր հարաբերությունները:

ԵԱԳԽ երկրորդ նախագահության հանդիպումը pas ԱԳ նախարարների որոշման հրավիրվելու է Բրյուսելում 1997 թ դեկտեմբերի 17-ին:

ԱՐԱՔՍ ՄԱՔԱՐՅԱՆ

«Սեպտեմբերի 25»-ի մասնաստում. Իրավաբանական կազո՞ւս, թե՞ ... էություն

Կիմ Բալայանի դատն ակնհայտորեն առանձնանում է նախորդ քաղաքական գործերից: Դատական կոլեգիան ձգտում է ժամ առաջ մոտենալ հանգուցալուծմանը, մինչ դատաստանական կողմը ամբաստանյալի գլխավորությամբ, ընդլինանում է վերջնագծին հասնելու արագացված ընթացքին, որն, ըստ Բալայանի, աղագուցում է, որ դատարանը դարձյալ դատվեր է կատարում: «Ինձ կեղծ ազատություն դեմ չէ, ես դատվով ազատություն եմ ուզում», հարազատներին դիմեց Բալայանը խնդրելով «արժանորել իր ութամսյա տառադանքները» եւ հասկանալ կեղտոտ խաղից մաքուր դուրս գալու ձգտումը:

Երեկվա նիստում, դատաստանելով դեպական մեղադրողի եւ դատդանների հարցերին, Բալայանը զարգացրեց իր ցուցմունքների մի շարք թեզեր, մասնավորապես ափսոսաց, որ չի նդատել դեպական հեղաշրջում կազմակերդելուն, բանի այդ դեմքում, հավանական է, չհայտնվեր մեղադրյալի աթոռին: Ամբաստանյալն անդրադարձավ տուժածին անօգնական բողնելու մեղադրանքի անհեթեթությանը: Արա Սահակյանի ոդքալի վիճակին ակնատես են եղել հարյուրավոր մարդիկ, այդ թվում ռահիկպանները: Ռահիկաններից մեկն, ի դատասխան օգնելու խնդրանքի, Սահակյանին խորհուրդ է տվել «խաղ շաղ», մեկ ուրիշը ֆիչ է համարել նյաձը Նույն տրամաբանությամբ ասաց Բալայանը, կարելի էր դատասխանատվության կանչել հեռուստադիտողներին, որ Աժ հայտնի նիստում դատգամավորներին ծեծելու ակառաս են եղել:

Փաստաբդերի հուդարակումից առաջ ներկայացվեցին մի շարք «դժբախտ» միջնորդություններ: Փաստաբան Ռուբեն Սահակյանը վկայակոչելով Կիմ Բալայանի Աժ դատգամավոր ընտրվելու վերաբերյալ Գերագույն եւ Սահմանադրական դատարանների որոշումները, ընդգծեց, որ Բալայանի դատգամավորության հարցն առնվազն առկախ է եւ, որպես դատգամավորության թեկնածու, Բալայանը կարող էր կալանվել միայն ԿԸՀ համաձայնությամբ: Ասել է թե կալանքն անօրինական էր: Այստեղից վերոհիշյալ գործը զննելու միջնորդությունը, որը մերժվեց «գործին չվերաբերելու» դատճառաբանությամբ: Սրան հետեւեց ամբաստանյալի միջնորդությունը դատավորին բացարկ հայտնելու մասին: Հիմնավորումը հետեւյալն էր, օրինաղահ եւ անաչառ դատավորը, ծանոթանալով գործում առկա բազմաթիվ օրինախախտումներին, դարտավոր էր փոխել խափանման միջոցը եւ հանուն ճշմարտության գործը վերադարձնել լրացուցիչ քննության: Դարտավոր էր նաեւ մասնավոր որոշում կայացնել 1994 թ. ՆԳ նախկին նախագահ Վանո Սիրադեղյանի կողմից իր նկատմամբ ձեռնարկված մահափորձի առնչությամբ քրեական գործ հարուցելու մասին: Եւ չի արվել, ինչը թույլ է տալիս կասկածելու նախագահողի անաչառությանը եւ իրավաբանական գիտելիքներին: Միջնորդությունը որ ամբաստանվեց դատաբանների հավելյալ փաստարկներով նույնպես մերժվեց: Ի դեմ հատարական դատաբան Ա. դասի Աբրահամյանը դեմ էր բացարկին հանդի փասան էր որ որեւէ այլ դատավոր ավելի անաչառ չէ լինելու: Սակայն Բալայանը չի կիսա միջոցներով չբավարարվելու վճռականությամբ, ներկայացրեց հաջորդ միջնորդությունը: Թեեւ եւ գործին կցել անհեթեթ մեղադրական եզրակացությունն ստորագրած «ծեր աղվեսին» (ՀՀ նախկին գլխավոր դատախազին) ուղղված դիմումն իր եւ հարազատների նկատմամբ հետաքննումների եւ ֆիզիկական բնաջնջման սպառնալիքների մասին: Ինչպես նաեւ դատախազի դատասխանն, ըստ որի, ԱԱԾՎ դեսը եւ ՆԳ նախարարը տեղեկացված են այդ մասին: Հիշեցնենք, որ ըստ Բալայանի, հետաքննումների հեղինակը Վանո Սիրադեղյանն էր: Միջնորդությունը մասամբ բավարարվեց ներկայացված բդրերը կցվեցին գործին:

Միջնորդությունների շարքը եզրափակվեց Վազգեն Մանուկյանին եւ ընդդիմության մյուս գործիչներին, որոնց հետ Բալայանն, ըստ մեղադրական եզրակացության, կազմակերդել եւ իրականացրել է սեպտեմբերի 25-ի դեմքերը, դատակոչի ենթարկելու միջնորդությամբ: «Սեպտեմբերի 25-ի» միասնական գործը մասնատելու իրավաբանական «կազուսը», սակայն հերթական անգամ փակուղու մեջ դրեց դատախնությունը, որպես ի՞նչ դատարան կանչել նրանց վկայի՞ թե՞ մեղադրյալի կարգավիճակով: Այս անգամ նախաքննության դրկված նյութերը չդիտարկան: Դրն Մարգարյանը հաստատելով որ գործ ունի իրավասանական կազուսի հետ ավելացրեց «Դա էություն է», իսկ Ռուբեն Սահակյանը հիշեցրեց էության տակից օրինական ճանապարհով դուրս գալու անհրաժեշտությունը:

ԼԵՎՈՆ ԳԱՐԵԳԻՆՅԱՆ

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանը ջանում է չդառնալ թմրանյութերի տարանցիկ ճանապարհ

Վարչապետ Ռոբերտ Քոչարյանը երեկ ընդունեց ՄԱԿ-ի թմրանյութերի վերահսկման կոմիտեի նախագահ Համիդ Գոդսին եւ քարտուղարության անդամ Պավել Պախտային: Մեծ նշանակություն տալով թմրաբիզնեսի դեմ դայքարն առավել արդյունավետ դարձնելու գործում Ռոբերտ Քոչարյանը կարեւորեց համապատասխան մարմինների տեխնիկական հագեցվածության խնդիրը:

Հանդիպմանը ներկա էր Հայաստանում ՄԱԿ-ի գրասենյակի մշտական համակարգող Կաթիցա Չեկալովիչը:

ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ

ՀԱՄԱՌՈՏ

Առաջիկայում կսեփականաշնորհվեն մնացած ՀԷԿ-երը

ԵՐԵՎԱՆ, 3 ՅՈՒՆԻՍ, ՓԱՍՏ: Առաջիկա երկու-երեք ամսվա ընթացքում էներգետիկայի նախարարությունը դատրաստվում է սեփականաշնորհման ներկայացնել հանրապետության մնացած հիդրոէլեկտրակայանները: Հաստատուն էներգետիկայի նախարարության տեղեկատվության, այս փուլում սեփականաշնորհման կներկայացվի 17 հիդրոկայան: Հաշվի առնելով սեփականաշնորհման առաջին փուլում առաջացած խնդիրները, նախարարությունը փորձում է միջոցներ ձեռնարկել հիդրոէլեկտրակայանների նոր խմբի սեփականաշնորհման ժամանակ միջազգային ներդրողներ ներգրավելու համար: Նշենք նաեւ, որ առաջին փուլում ներկայացված 8-ը հիդրոէլեկտրակայաններից սեփականաշնորհվել է 7-ը:

Դրամը շարունակում է արժեզրկվել

ԵՐԵՎԱՆ, 3 ՅՈՒՆԻՍ, ՓԱՍՏ: Հանրապետության ֆինանսական շուկայում արագորեն շարունակվում է դրամի արժեզրկումը ամերիկյան դոլարի նկատմամբ: Դրամի եւ դոլարի իրական արժեքների վերաբերյալ որոշ դատատնական հայտարարություններից հետո, կենտրոնական բանկը կարծես մի կողմ է քաշվել եւ չի փորձում միջամտել դրամի հերթական արժեզրկմանը, որը վերջին օրերին հասավ իր առավելագույն նիշին՝ մեկ դոլարի նկատմամբ կազմելով 510 դրամ: Հանրապետության արժութային շուկայում արձանագրվող հերթական տեղաշարժերը, դժվար թե հնարավոր է տեղավորել արժեզրկման ԿԲ-սահմանած չափանիշների մեջ, այն դեմքում, երբ հանրապետության տարեկան բյուջեում փաստվեց, որ դրամի առավելագույն անկումը դոլարի հարաբերությամբ մինչեւ տարվա վերջ չդետք է գերազանցեր 500-ի սահմանը:

Թուրք-իրանական հարաբերությունները կարեւորվում են Հայաստանի համար

(Սկիզբը էջ 1)

Թուրքական մամուլը, բացառությամբ «Բարորություն» կուսակցության դատատնաթերթ «Միլլի գազետե»-ի, հաճախակիորեն հարձակում է գործում Իրանի Իսլամական Հանրապետության եւ նրա ղեկավարների վրա: «Յուրրիյեթ» օրաթերթը, որ մամուլի ծանրակշիռ օրգան է, հարձակումների կողքին ուշի-ուշով հետեւում էր Իրանի Իսլամական Հանրապետության նախագահական ընտրություններին: Թերթի թղթակից Սեվին Չաղլայանը ընտրությունների օրերին Թեհրանում էր գտնվում: Նա դրանց ընթացքին անդրադարձավ «Յուրրիյեթի» մայիսի 24-ի եւ 26-ի համարներում: Որպես կին լրագրողի, նրան, ինչ խոսք, հուզում էր իրանցի կանանց իրավական վիճակը կազմված հագուստի առանձնահատկությունների հետ, որոնց վրա էլ նա կանգ առավ: Հարկ է նշել, որ հագուստի հարցը, ըստ երեւույթին, հուզում է նաեւ իրանցի կանանց եւ երիտասարդներին: Հակառակ դեմքում, վերջիններիս ծնող մեծամասնությունը ընտրություններում Մոհամեդ Խաթամիի օգտին չէին քվեարկի: Ընտրողները, որոնք ատահովեցին Խաթամիի հաղթանակը դատահանական Նաթեղ Նուրիի նկատմամբ, ազատականացում են ակնկալում: Իսկ նրանց ակնկալիքները առաջին հերթին վերաբերում են կենցաղին:

Ինքը՝ Մոհամեդ Խաթամին, որպես նորընտիր նախագահ, մամուլի առաջին ասուլիսում ակտիվության կոչ արեց երիտասարդությանը, արտահայտելով նրանց նկատմամբ իր խորին վստահությունը: Նրա կոչը, թերեւս, կարելի է վերագրել կենցաղի հարցերում հետագա ազատականացման նորընտիր նախագահի դատրաստակամությանը: Չդետք է սակայն մոռանալ, որ կենցաղի ազատականացումը առանց երկրի տնտեսության, առավել եւս այլ երկրների հետ առեւտրա-տնտեսական հարաբերությունների ազատականացման, չի կարող լիարժեք լինել: Իսկ տնտեսության, եւ հատկապես առեւտրա-տնտեսական հարաբերությունների ազատականացումը այլ դեսությունների, մասնավորապես, Արեւմուտքի հետ, չի կարելի դայմանավորել տվյալ երկրի ղեկավարների դատրաստակամությամբ: Իրանի Իսլամական Հանրապետության դարագայում վերոհիշյալ դորտերների ազատականացման նախադայմանը այդ դետության նկատմամբ ԱՄՆ-ի գլխավորությամբ Արեւմուտքի դիրքորոշումն արմատական փոփոխությունն է դրական առումով: Թերեւս, դա դրականորեն կփոխեր նաեւ թուրք-իրանական հարաբերությունների ընթացքը: Սակայն, թուրք-իսրայելական համագործակցության ամրապնդումը ռազմական բնագավառում, ինչի միջոցով տարածաշրջանում միանգամայն ամրապնդվում են ԱՄՆ-ի դիրքերը, ոչ միայն որեւէ հիմք չի տալիս լավատեսական կանխատեսումների համար, այլեւ անխուսափելի է դարձնում ռազմաքաղաքական իրավիճակի հետագա սրումը Միջին Արեւելքում: Մոսկվայի ցանկացած փորձ, ուղղված իր երբեմնի ազդեցության վերականգնմանը Իրանում, Սիրիայում, թվում է, թե էլ ավելի կբարդացնի իրավիճակը: Ուրեմն, կարվեն ԱՄՆ-ի փոխհարաբերությունները Իրանի Իսլամական Հանրապետության հետ, իսկ նման դայմաններում Թուրքիայի արեւմտյան կողմնորոշումը անխուսափելիորեն կդահպանի իր դերն ու տեղը Իրանի հետ փոխհարաբերություններում: Իսկ դա, գոնե մոտիկ ապագայի համար, անընդհատ կբարդացնի Հայաստանի հարաբերությունները տարածաշրջանում:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության է տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«Ազգ» թերթի հիմնադիր խորհուրդ
Երեւան 375010, Հանրապետության 47
Ֆաքս 562941, AT&T (3742) 151065,
e-mail INTERNET azg2@arminco.com
Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՐԵՏԻՔԵԱՆ / հեռ. 521635
Տնօրեն
ՍԱՐԳԻՍ ՍԱՐԳՍՅԱՆ / հեռ. 562863
Համակարգչային
ծառայություն / 581841
Apple Macintosh
հանդարգչային տարածքը
«Ազգ» թերթի
Տյուրմը «Ազգին» դատկանում է
«AZG» DAILY NEWSPAPER
Editor
H. AVEDIKIAN / phone 521635
47 Hanrapetoutian st.
Yerevan, Armenia, 375010

ԱԶԳ

ՈՒՄԲԱԳԻԿ

ՀԱՅՊԵՏՍՏԱՆԴԱՐՏ

Մեր նախարարությունները չեն համապատասխանում միջազգային չափանիշներին

Իսկ «Ռախշա» լվացքատեղությունը թեև որակյալ է, սակայն ուտելու չէ

Հայրենասանդարտում հրավիրված մամուլի ասուլիսի նպատակն էր ծանոթացնել մեր հասարակությանը ներկա փուլում վարչության գործունեության առջև բացված կամ փակված հեռանկարներին: Ինչպես հայտնի է, ՀՀ Ազգային ժողովը վերջերս ընդունեց երկու օրենք, որոնք ուղղված են նշված գործունեության կարգավորմանը եւ Հայրենասանդարտի ազդեցության ոլորտներն ընդլայնելուն: Մինչդեռ չգրված օրենք է, որ գրեթե բոլոր երկրներում նմանատիպ կառույցները համընդգրկուն են, քանի որ յուրաքանչյուր երկրի աշխարհ ներկայանալու հիմքում ընկած է արտադրության եւ սպասարկման որակը: «Չափումների միասնականության ապահովման մասին» ու «Ստանդարտացման եւ սերտիֆիկացման մասին», այսպես են կոչվում կամ հենց սրանք են իրավական այդ փաստաթղթերը, որոնց կիրառումն, այնուամենայնիվ, պայմանավորված է մի շարք կարեւորագույն գործոններով: Վարչության պետ Ղուկաս Մեհրաբյանը կատարեց այդ գործոնների հետաքրքիր մի տասնամյակում, որի հետեւանքով ապացուցվեց այն, որ ոչ լավագույն, ոչ պակաս ՀՀ գործող մասնագիտացված կազմակերպություններ չեն համապատասխանում միջազգային չափանիշներին: Պրն Մեհրաբյանը շանձնավորեց իր խոսքը, քանի որ ասելիքը ընդհանուր բնույթի էր եւ ներկայացնում էր ընդհանուր վիճակը: Դա կազմված է ինչպես կառուցվածքային խնդիրների, այնպես էլ պաշտոնակատարների անհատական կեցվածքի հետ: Ըստ պրն Մեհրաբյանի մեր նախարարների կամ չինովնիկների մեծ մասը ունակ չէ հարցեր լուծելու հեռախոսով եւ այս հանգամանքն արդեն իսկ հեղում է միջազգային չափանիշներից: Նրանք անզոր են նաեւ գերբազմաստիճան կառույցների բեռից, ինչպիսին, օրինակ, ծառայողական մեքենա ունենալու ֆիզիոլոգիական անհրաժեշտությունն է եւ այլն: Պրն Մեհրաբյանին անհասկանալի է թվում նաեւ միեւնույն ոլորտներով զբաղվող մի քանի գերատեսչությունների զուգահեռ գոյությունը, մի բան, որ պարզորոշ նկատվում է, օրինակ, սոցիալական ապահովության բնագավառում: Հայրենասանդարտի վարչության պետին առանձնապես չի ոգեւորում նաեւ «գործարար մարդկանց եւ արդյունաբերողների» միությունը, որը չունի այնպիսի ծրագիր կամ համապատասխան փաթեթ, որ ներկայացված է չափագիտական, ստանդարտացման եւ սերտիֆիկացման ուսումնասիրություններին: Միջազգային չափանիշներին, ըստ Ղուկաս Մեհրաբյանի, հակասում են նաեւ մեզանում ընդունված կամ հնարավոր հարստացման եղանակներից շատերը: Մասնավորապես նա գտնում է, որ օրենքի ուժով պետք է պաշտպանել մարդկանց, որոնք, օրինակ, 10 հազար ԱՄՆ դոլարով գնում են ինչ-որ կառույց եւ արդա վաճառում են 50 հազարով: Ինչ խոսք, դժվար է հակադրվել պրն Մեհրաբյանի տեսանկյանը, առավել ես, որ լրագրողներն իրենք հաճախ ժամանակ են վատնում տարբերական մի պատասխան ստանալու համար: Սակայն, ըստ Հայրենասանդարտի պետի, թղթակիցներից նույնպես բոլորը չէ, որ համապատասխան որակ են ապահովում: Այսպես, օրինակ, իրանական «Ռախշա» հեղուկը, որը հետազոտվել է Հայրենասանդարտի կողմից, պարզվել է, որ որակյալ լվացքամիջոց է, սակայն ոչ ամանեղենի համար: Վարչության տեղեկությունը կրթում, ըստ էության, ոչ մի նոր բան չի տալիս: Հայրենական արտադրանքը այսպիսով ժամանակավորապես «պարտադրված է» սահմանափակվել սեփական տնտեսվարողներով եւ փորձել տեղական ասպարեզից դուրս մղել մեր ձավորարեալյան շատ ապրանքատեսակներ: Սա հետեւանք չէ, քանզի պայմանավորված է արտադրողների ազատության մակարդակով, իսկ դրանց գործերին Ղուկասյանի վկայությամբ, ավելի քան հարկն է միջամտում է պետությունը: Գործադիր գերատեսչությունները ոչ թե պետք է ներխուժեն մարդու զբաղվածության ոլորտ, այլ նպաստեն հարկատու հիմնարկությունների եւ արտադրողների քանակի աճին, նրանց թողնելով ազատ եւ մրցունակ պայմաններում:



ԱԲԵՍ ՂԱԶԱՐՅԱՆ

ՀՐԱՏԱՊ

Սեպտեմբերին դասագրքերի պակաս չի լինի, հավաստիացնում է կրթության նախարարը

Նախորդ տարի (մայիսի վերջին) կրթության նախարարությունը հայտարարել էր դասագրքերի բաժանորդագրություն վերջինս դիտարկելով որպես դասագրքերի տպագրության միակ միջոց: Հանրակրթության խնդիրներով չափազանց բահագրգիռ որոշ անձիք այսօր տագնապ են հնչեցնում, պնդելով, թե 97-98 ուստարվա դասագրքերի տպագրությունը դեռ չսկսված, ձախողված է: Այս տարի դպրոցականներն ապահովված կլինե՞ն դասագրքերով: Այս հարցին պատասխանում է կրթության եւ գիտության նախարար Արտաշես Պետրոսյանը:

– Եկող տարվա ուսումնական գրականության անվանացանկը՝ հիմնական եւ լրացուցիչ դասագրքեր, ծրագրեր եւ ուղեցույցներ, հաստատված է: Հիմնական դասագրքերը կամ արդեն եղել են շրջանառության մեջ, կամ 94-ին անցել են փորձաքննություն, հաստատվել նախարարության կոլեգիայով, սակայն, «սառեցվելով» պրն Բլեյանի կողմից, չեն տպագրվել: Անվանացանկը բխում էր կառավարական հանձնաժողովի 1995 թ. օգոստոսի 23-ի որոշումից: Գրքերի մի մասը, որ տպագրելու է «Փյունիկ» հրատարակչությունը, փորձնական են եւ, դրական արձագանքների դեպքում, հաջորդ տարի կհամալրեն հիմնական դասագրքերի շարքը («Փյունիկն» առայժմ սեփական միջոցներով է կազմակերպում տպագրությունը):

1998-99 ուստարվանից, ինչպես հայտնի է, դասագրքերը կապահովվեն ՀԲ ծրագրի շրջանակում, ուր, ի դեպ, նախատեսվածից ավելի, կմտնեն նաեւ կրտսեր դպրոցի դասագրքերը (սա, կարելի է ասել, մեր ձեռքբերումն է): Օրերս կկազմվի հանձնաժողով, կհայտարարվի հրատարակիչների եւ հեղինակների մրցույթ (փետրվարյան մրցույթի շարունակությունը), որ կավարտվի 98-ի մարտին: Մինչ այդ, սակայն, պետք է լուծվի այս տարվա դասագրքերի խնդիրը: Պետբյուջեից սուբսիդիաներ չունենք, ուստի դեկտեմբերից մեր գլխավոր մտահոգությունն անհրաժեշտ գումարների հայթայթումն էր, որ այսօրվա դրությամբ հաջողված է արտաքին կազմակերպությունների հետ բանակցությունների միջոցով (UNICEF, ՄԱԿ-ի փախստականների հանձնաժողով): Վերջիններս պատրաստ են տրամադրելու մոտ 550 հազար դոլար անհատույց, նվիրատվության կարգով: Ավարտվում են բանակցությունները ՀՕՄ-ի հետ, որն, ամենայն հավանականությամբ, կֆինանսավորի «Այբբենարանի» տպագրությունը:

Կտպագրվի 600 հազար դասագիրք, որի համար անհրաժեշտ է մոտ 300 տ թուղթ: Այդպիսի մեծ պատվեր հանրապետությունում վերջին տարիներին չի եղել, այնպես որ, հիմա տպարանները թղթի որոնումների մեջ են: Բոլոր գրքերը կլինեն կոշտ կազմով, գունավոր, լավ որակի (փափուկ կազմ կունենա միայն «Այբբենարանը»): Դասագրքերը բաշխման նախնական ծրագիրը, ըստ որի գրքերն անվճար էին տրվելու դպրոցականներին, որոշ փոփոխություն է կրել, դրանք կբաշխվեն դպրոցական գրադարանների համակարգով, վարձութային սկզբունքով: Մուծելով 100-160 դրամ խորհրդանշական գումար, որ զգալիորեն զիջում է դասագրքի իրական արժեքին (800-850 դրամ), երեխաները մի տարի ապահովված կլինեն դասագրքերով: Հավաքված գումարները կկուտակվեն դպրոցների միկրոհաշիվներում (այդ մասին պայմանավորվածություն կա «Միդլենդ Արմենիայի» հետ):

– Դպրոցական գրադարանները դատա՞րկ են, թե՞ ինչ-որ բան, այնուամենայնիվ, պահպանվել է:

– Մեր հաշվարկներով, 1-4-րդ դասարանների դասագրքերը պահպանվել են մոտ 10 տոկոսով, 5-րդ դասարանից բարձր՝ գրեթե 50 տոկոսով: Ցավոք, որոշ դպրոցների տնօրենները ջանասիրաբար իրագործել են «հին դասագրքերից» ձերբազատվելու 1996 թ. հուլիսի 26-ի նախարարության հրամանը:

– Հայտնի է, որ դպրոցների տնօրենների մի մասը «բլեյանական դասագրքերը» նախընտրում է նախորդներից: Քաղաքապետարանի կրթության բաժնի պետ Սերգեյ Պողոսյանից, օրինակ, տեղեկացանք, որ երեւանյան 15 դպրոցների տնօրենները այդ բովանդակությամբ դիմումներ են ներկայացրել քաղաքապետարան: Հիմնական դասագրքերը կպատրաստվե՞ն նրանց:

– Պարտադրանք չի լինի: Այդ գրքերը հաստատված են որպես լրացուցիչ գրականություն եւ օգտագործման են թույլատրված: Ուսուցիչների մեծ մասի կարծիքով, դրանք կարելի է հաջողությամբ համատեղել հիմնականների հետ: Ռուսաստանում, օրինակ, միայն պատմության դասագրքի 7-8 տարբերակներ կան, որ համապատասխանում են ուսումնական ծրագրերին, եւ դպրոցներն ընտրության հնարավորություն ունեն: Այսօր Հայաստանի սուղ պայմաններում վաղ է խոսել լուրջ այլընտրանքի մասին, սակայն վերջինիս սաղմերն արդեն երեւում են: Օրինակ, Լ. Տեր-Գրիգորյանի, Բյուրեղյանի «Այբբենարանը», որի մասին հիանալի կարծիք կա, ընդունված է որպես հիմնական եւ կտպագրվի ՀՕՄ-ի միջոցով: Մյուսը, Սարգսյանի հեղինակությամբ, որի մասին նույնպես լավ արձագանք կա, փորձնական է եւ, եթե արդյունքը դրական լինի, մյուս տարի կտպագրենք «Փյունիկին», կտպագրենք ավելի մեծ տպաքանակով, եւ դպրոցները կարող են ընտրություն կատարել:

ԼԻԼԻԹ ՊՈՂՈՍՅԱՆ

Խավարը գրում են թեկուզ մի մոմ վառելով

Սիավոր աղեից հետո զարկված ու զրկված գյումրեցիներին թեկուզ ամենաջերմ խոսքերով կարեկցել-հորդորել չէր պետք, ավերված տների ու քաղաքի վրա լացուկոծել, ախուվիսել չէր պետք... Ընկնողը լաց չի լինում: Ընկնողը ոտքի է ելնում ու քայլ տալիս իրեն: Խավարը գրում են ոչ թե անեծքներով, այլ՝ թեկուզ մի մոմ վառելով...

Այսպիսի խոհեր ուներ Աղասի Մարտիրոսյանն այն դառն ու սառն օրերին: Այսպես է խորհում եւ այսօր՝ տարիներ հետո, երբ մի նոր աղետ է դարձել նաեւ գործազրկությունը:

Աշխատասեր, ոսկեձեռիկ գյումրեցիները, միշ է ասել՝ ձանձրանում են անգործությունից: Եվ Աղասին նախ սեփական միջոցներով ու ջանքերով վերականգնեց երկրաշարժից վթարված «Հայաստան» կինոթատրոնի շենքը, վերածեց մշակույթի օջախի, «հրաշալիքների տան», որտեղ անվճար համերգներ էր տալիս (երաժիշտ, երգիչ, երգահան, ածողներ): Այնտեղ անցկացվում են զանազան միջոցառումներ՝ կինոցուցադրումներ, մրցույթ-ստուգատեսներ: Քաղաքի [illegible] հանձնախմբերով ստեղծեց գուսանական համույթ, տիկնիկային թատրոն, ածողների խումբ... Բայց դա նրան միշ է թվում: Նդատակ ունի ավարտել հազար տեղանոց մեծ դահլիճի նորոգման-վերակառուցման աշխատանքները, որում կընդգրկվեն ավելի շատ մարդիկ:

Գյումրիում Աղասի Մարտիրոսյանի համբավը մեծացավ մանավանդ «Վասպուրական-2000» անունը կրող տոնական ստեղծելուց հետո: Ավելի քան 150 վաճառասեղաններ, երկու հարյուր աշխատողներ, ասել է, թե քաղաքում եւս երկու հարյուրով պակասեց գործազուրկների բանակը: Վերջերս էլ տոնական մոտ բացվեց վարսավիրանոց, լուսանկարչատուն, կառուցվեց բաղնիք (անվճար), ապասարկման այլ օբյեկտներ:

Մարդկանց աշխատանքի ներգրավելու մասին նոր պրոցեսները առօրյա հոգս են բարեգործի համար: Ահա թե ինչու Գյումրիում նրա մասին այնպիսի խանդաղատանքով են խոսում հայրենակիցները:

– Շատ տարի անցավ, տուն չէլին: Աղասին մեզ համար տնակ գտնեց, ինձ աշխատանքի ընդունեց: Սորի՝ աբեր (Արմիկ Հակոբյան):

– Պայմաններ է ստեղծել, որ մարդիկ աշխատեն, փողոցները չընկնեն: Առեւտուր ենք անում հանգիստ, առանց վախենալու... Քի՞չ բան է: (Անահիտ Հունանյան):

– Աշխատանք չկար, չէի աշխատում: Աղասու շնորհիվ առեւտուր եմ անում: Փա՞ռք աստծո, օրական հացի փող ունեմ (Ժորա Մինասյան):

– Աղասը չլիներ, սովից կմեռնեինք... Գեր օր չտեսնի (Ռոզա մորաքույր):

– Թոշակով ապրել կլինի՞... Մեզ համար տուկա բացեց մարդը, առեւտուր ենք անում, ապրում ենք: Օրհնվի՝ նրա անունը (Ժորա Փահլեւանյան)...

Իրոք, դժվար է թերագնահատել բազմաշնորհ, գթասիրտ գյումրեցու բարեգործական նախաձեռնությունները կիսավեր Գյումրիի համար: Թվում է, թե հայազգի շատ բրգնեսմեններ պետք է կրկնեն Աղասի Մարտիրոսյանի համար հավատամք դարձած Ջոն Քենեդիի հայտնի արտահայտությունը. «Մի հարցրու՝ ի՞նչ է արել հայրենիքը քեզ համար, հարցրու՝ ի՞նչ ես արել հայրենիքի համար»:

ԱՐԹՈՒՐ ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀԱՄԱՌՈՏ

Օղակաձեւ ջրամատակարարում՝ Ստեփանակերտում

Այս տարվա հունիսի վերջին կավարտվեն Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մայրաքաղաքի ջրամատակարարման օղակաձեւ համակարգի շինարարության աշխատանքները, որոնք ֆինանսավորվում են «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից: Ինչպես տեղեկացրին կաղալաառու ձեռնարկության Ստեփանակերտի շինմոնտաժային վարչությունից, օղակաձեւ ջրատար ցանցի շինարարությունը հասել է նախագծային վերջին հատվածին: Չկալով փողոցին: Բնակչության ջրամատակարարման նոր ցանցի գործարկումով զգալիորեն կբաւելավվի մայրաքաղաքի մտնող ջրի խնայողական օգտագործման վարային իրավիճակներ առաջացնելու դեպքում քաղաքացիներին անխափան ջուր մատակարարելու գործընթացը:

Վ. Ա.

Հայկական եկեղեցի Գակայում

Զարմանալի է, որ գտնվում է Բանգլադեշ պետության մայրաքաղաքում գոյություն ունի հայկական եկեղեցի եւ հայկական փոքրիկ համայնք: Սուրբ Հարություն եկեղեցին կառուցվել է 1791 թ. Նոր Ջուղայի Աղասիան հայ վաճառականների կողմից, որոնք մեծ շահույթ ունեին ջրի առեւտրից: Ներ կայուն եկեղեցին գտնվում է Միքայել Հովսեպի Մարտիրոսյանի խնամքի տակ եւ վերանորոգման կարիք ունի: Բոլոսները գերազանցում են փոքրիկ համայնքի հնարավորությունները: Եկեղեցին սպասում է հովանավորների:

«ՀԱՅԿ ՕՐԱԹԵՐԹ»

ԱԶԳ

տեսակետ

Երեսպաշտություն եւ... անկախություն

Երեսպաշտություն եւ անկախություն: Երկու, թվում է՝ անհամատեղելի հասկացություն: Բայց, ահա, պարզվում է, որ անկախության մասին ճամարտակությունները մեզ մոտ՝ Հայաստանում ինչպես եղել, այնպես էլ մնում են մաքրամաքուր երեսպաշտություն այն խաղախաղեցների համար, ովքեր իրենց երեւակայում են Հայրենիքի չափից դուրս «անկախ» փրկիչներ, թեեւ օրակարգում Հայաստանի՝ Ռուսաստանի եւ Բելառուսի հետ միության մեջ «լինելու» կամ «չլինելու» հարցն է:

Տարիներ առաջ այդ երեսպաշտությունը դրսեւորվեց «Նաիրիտը», ուստի եւ՝ նրանից տեխնոլոգիապես կախյալ բոլոր քիմիական գործարանները փակելու կեղծ հայրենասերների համառ պահանջների «տեսքով»: Դադարեցվեց Ալավերդու լեռնամետալուրգիական կոմբինատի աշխատանքը, հետեւաբար, շուտափելիորեն կրճատվեցին նաեւ Զանգեզուրի եւ Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատների արտադրության ծավալները, կանգնեցվեց հայկական ատոմակայանը:

Պատճառաբանությունները բավականին պարզունակ էին. Մոսկվան կողոպտում է մեր ազգային հարստությունը, նրա՝ ված արտադրություններից հանրապետությանը հասնում են խղճուկ փշրանքներ: Իսկ մեր բարվոք կյանքի համար, ինչպես պնդում էին «անկախասերները», բավական կլինի զգալիորեն ավելացնել «Ջերմուկի», կոնյակի, լոլիկի եւ ծիրանի արտադրությունը... Միջազգային ստանդարտին համապատասխանող շշերով «Ջերմուկի» արտադրությունը կարգավորեց «Շանթ» ընկերությունը: Իսկ, կոնյակը, թեեւ դարձել է բարձրորակ, սակայն գնորդ չունի, տոմսը իրոք շատացել է, սակայն՝ իրանական է, չիր ու չամչով սեղանիկները լեցուն են, բայց... թուրքական:

Աստիճանաբար ես նախարարների խորհրդի նախագահությունում (1990 թ. աշուն) այն ժամանակվա փոխվարչապետ, էկոնոմիկայի նախարար Հրանտ Բագրատյանի ոգեշունչ հաշվետվությունները: Հերթական մոսկովյան խորհրդակցությունից վերադառնալով, նա անսովոր ցնծությամբ զեկուցում էր՝ ծվատվող ԽՍՀՄ-ի արդեն հոգեվարք ապրող միասնական ժողովրդատնտեսական համալիրում հանրապետությունների տնտեսական կապերի խորացող խզման մասին՝ մի «գործ», որին խառն էր նաեւ հայկական անկախության ռազմավարների «մասը», ովքեր, գիտակցաբար կամ անգիտորեն, կամ էլ՝ արտաքին հուշումներից դրդված, սեփական ժողովրդի հանդեպ դավադիր գործողություններով կաթվածահար արեցին մեր գործարանները ու կոմբինատները: Խնդիրը հստակ էր ծեւակերպված. թոթափել կայսրության լուծը, հնարավորին չափ արագ խզել ամեն կարգի տնտեսական կապերը: Չէ՞ որ հենց այդ օրերին էր այն ժամանակվա վարչապետ Վազգեն Մանուկյանը ծեւակերպել իր մոտեցումները համազգային վերածնության վերաբերյալ՝ «Գնացքից թռչելու ժամանակը» տխրահռչակ «ծրագրային» հոդվածի մեջ. տրվեց ազգային էկոնոմիկան կազմալուծելու եւ վերակողմնորոշելու ազդանշանը, սահմանվեցին ազգային զարգացման գերակայությունները: Կողմնորոշում դեպի... Թուրքիա:

Եվ նախապատրաստվող «տնտեսական հեղափոխության» գաղափարախոսները եղան տխրահռչակ Հրանտ Բագրատյանը, Լեւոն Բարխուդարյանը, Բագրատ Ասատրյանը, Արմեն Եղիազարյանը: Պատվերն իջեցրել էր ինքը՝ ՀՀՇ-ի համակարգող Վազգեն Մանուկյանը:

Իսկ ի՞նչ հետեւանքներ ունեցավ այդ արկածախնդրությունը հանրապետության ճակատագրի, հարյուր-հազարավոր մարդկանց համար, ովքեր չհուսաբեկվեցին ահեղ երկաբաժնից, վերապրեցին շրջափակման տանջալից տարիները. Սումգայիթի, Բաքվի, Կիրովաբադի ջարդերը, ովքեր անկախության նվաճման մեջ որոնում էին իրենց դարավոր երազանքների իրականացումը, ապրել արդար ու մարդասեր աշխարհում:

Մի քանի խոսք՝ ոչ հեռավոր անցյալից: 1990-ին Հայաստանում համախառն ներքին արտադրանքը (ՀՆԱ) մեկ շնչի հաշվով կազմում էր 4741 դոլար, 1992-ին՝ 2420, 1993-ին՝ 530, 1994-ին՝ 365, 1995-96 թվականներին (հաշվի առնելով վիճվարչության բացահայտ չափազանցված տվյալները)՝ 420-440 դոլար: Հիշեցնենք դեռ 1987-ին ԽՍՀՄ-ը այդ ցուցանիշով աշխարհում գրավում էր 30-րդ տեղը (մեկ շնչին ՀՆԱ-ն կազմել էր 6505 դոլար), եւ այդ ցուցանիշով Հայաստանը նույն տարում գերազանցում էր միջին միութենական մակարդակը, եւ դա՝ այն ժամանակ, երբ հանրապետության ազգաբնակչության աճի թափը գրեթե կրկնակի ավելի էր երկրի ցուցանիշից: Հայաստանը մեկ շնչի դիմաց տնտեսական հզորությամբ կրկնակի գերազանցում էր Թուրքիային ու Իրանին, իսկ հիմա աշխարհի 174 երկրների մեջ ետ է տարվել վերջին տեղերից մեկը...

Դրությունն ավելի բարդացավ, երբ Ազգային ժողովն ընդունեց 1997 թվականի պետբյուջեի մասին հակասահմանադրական օրենքը (ընդսմին, այս «ձեռնարկումը» հրամցվում էր որպես վարչապետ Արմեն Սարգսյանին աջակցելու բարեսեր ցանկություն): Ընթացիկ տարվա բյուջեի եկամտային մասի լրացումը միայն 46 տոկոսով է կախված ազգային էկոնոմիկայի գործունեությունից, մինչդեռ՝ 1996-ին այս ցուցանիշը կազմել է 57 տոկոս, 1995-ին՝ 67 տոկոս, իսկ 1994-ին՝ 72 տոկոս: Ռուսաստանում այս ցուցանիշն ընթացիկ տարում կկազմի 72 տոկոս, ընդ որում՝ ունենալով 10 տոկոսային կեսով աճելու պահեստաչափ: Այսպիսով, մի կողմից, տարեցտարի աճում է Հայաստանի պարտքը միջազգային ֆինանսական կազմակերպությունների տրամադրած վարկերի դիմաց, որն արդեն անցել է 600 մլն դոլարի սահմանագիծը. մյուս կողմից ընթանում է ազգային էկոնոմիկայի նույնքան հետեւողական կաթվածահարումը: Պատկերը լրացնելու համար ասենք, որ Հայաստանը Համաշխարհային բանկի (ՀԲ) աշխարհում (բնակչության մեկ շնչի հաշվով) ամենախոցոր վարկառու երկիրն է: ՀԲ-ի տվյալների համաձայն, բնակչության մեկ շնչին Հայաստանում ընկնում է 24,2 ամերիկյան դոլար պարտք: Ռուսաստանում այն կազմում է 12,5, Լիտվայում՝ 11,4, Ուկրաինայիում՝ 6,6, Լեհաստանում՝ 4,7, Բելառուսում՝ 0:

Իսկ ինչպիսի՞ն են ֆինանսաբանկային ոլորտի գործերը: Եթե անկեղծ լինենք, անմխիթար են: ՀՀ ԱԺ-ի կողմից Կենտրոնական բանկի, բանկային գաղտնիքի եւ բանկային գործունեության մասին օրենքների ընդունումը հանգեցրեց երկրի Կենտրոնական եւ առեւտրային բանկերի գործունեության փաստացի անվերահսկելիությանը: Եվ, ահա, 1997-ի 1-ին եռամսյակում Կենտրոնական բանկի արտաքին համախառն ակտիվները (ԱՀԱ) կրճատվեցին 20 մլն դոլարով կամ՝ 12 տոկոսով, եւ դա այն դեպքում, երբ 1995-ին Կենտրոնական բանկի ԱՀԱ-ի 108 մլն 680 հազար դոլարից 74,8 մլն-ը ծեւավորվել էր ազգային էկոնոմիկայի գործունեության հետ կապ չունեցող արտաքին մուտքի հաշվին, իսկ 1996-ին 60 մլն դոլար ԱՀԱ-ն 68 տոկոսով իրականացվել է նույնպես արտաքին մուտքի հաշվին: Եթե սրան ավելացնենք, որ ՀՀ բոլոր առեւտրային բանկերի կանոնադրական դրամագլխի գրեթե 50 տոկոսը պատկանում է արտասահմանյան ֆաղաքացիներին, ապա պարզ կդառնա բանկային համակարգում ստեղծված տագնապահարույց իրավիճակը:

Խորապես մտահոգում է առեւտրի հաշվեկշռի տարեցտարի աճող դեֆիցիտը, որը 1995-ին կազմել է 571,2 մլն դոլար: Ներմուծումը 3 անգամ գերազանցել է արտահանումը (արժեքային արտահայտությամբ) եւ կազմել է 861,5 մլն դոլար՝ 290,3 մլն դոլար արտահանման դիմաց:

Այսպիսով, ՀՀ կառավարության հանձնակի փոփոխվող վարչապետները՝ գործադիր եւ օրենսդիր իշխանությունների տնտեսական եւ ֆինանսական կառույցների ղեկավարների (Լեւոն Բարխուդարյան, Բագրատ Ասատրյան, Վահրամ Ավանեսյան, Արմեն Եղիազարյան) անփոփոխության պարագայում վերջնական կազմալուծման հասցրեցին երկրի էկոնոմիկան, իսկ ֆինանսաբանկային համակարգը



հակասահմանադրական լինելը, ինչը վերջնական ֆինանսատնտեսական հատի կհանգեցնի երկիրը: Առ այսօր, ՀՀ անկախության վեց տարիների ընթացքում չեն մշակվել հայ պետականության հիմնարար հարցերը, որոնք առավել արդյունավետ ձեւով նպաստեին ազգի տնտեսական անկախության ապահովմանը:

Այսպիսիք են մեր այսօրվա կյանքի որոշ իրողությունները, որոնք շոշափելի դեր խաղացին ՀՀ կառավարության եւ Միջազգային արժութային հիմնադրամի (ՄԱՀ) պատվիրակության միջեւ վերջերս տեղի ունեցած բանակցություններում: Բանակցություններից հետո ՄԱՀ-ի պատվիրակության ղեկավար Թանոս Կացամբասը միանշանակորեն «խորհուրդ տվեց» պատասխաններ չփայփայել Հայաստանի երբեմնի արդյունաբերական հզորությունը վերականգնելու առնչությամբ: Մեզ հրահանգվում է զարգացնել սոսկ մանր եւ միջին բիզնեսն ու ծառայությունների ոլորտը: Իսկ դրա իմաստը ոչ այլ ինչ է, քան մարդկանց բաժանումը տերերի ու ծառաների, երկիրը միջազգային ֆինանսական կազմակերպությունների գաղութ դարձնելը: Վիթխարի գրկանքների գնով անցյալում նվաճված եւ ձեռք բերված ազատություններն այժմ փոխարինվում են մեկ, ամենաանամոթ ազատությամբ՝ ամեն բան, համոզմունքներից սկսած մինչեւ հայրենի երկիրը վաճառքի հանելու ազատությամբ: Հրանտ Բագրատյանի ու նրա թիմի (նույն Լեւոն Բարխուդարյանի, Վահրամ Ավանեսյանի, նրանց նախկին գինակից Բագրատ Ասատրյանի) եւ նաեւ կործանարար «վարչապետյան» չարաճճիությունների աջքեւային լոբբիստների՝ ի դեմս ԱԺ ֆինանսա-վարկային, բյուջետային եւ տնտեսական հարցերի հանձնաժողովի նախագահ Արմեն Եղիազարյանի ու նրա թիկունքին կանգնած «Հանրապետություն» դաշինքի պատգամավորների ջանքերը տվեցին իրենց դառը պտուղները: Դե ինչ, մեր բոլոր չարիքների հեղինակների անուններն ու գործերը հայտնի են, հայտնի են նաեւ նրանց ֆաղաքական ճնշման մեթոդները: Նրանք՝ վերջապես կարող են զգեկուցել. «դրսից» իջեցված առաջադրանքը կատարված է: Եվ հիմա, արդեն, կարելի է ազատորեն խոսել՝ ձեռնամուխ լինելով հանրապետության էկոնոմիկայի փլուզման գործում սեփական «սխրանքների» շարադրմանը, երեսպաշտորեն «Ազատություն» հորջորջվող կուսակցության ստեղծմանը, սեփական թերթերի թողարկմանը, մասնավոր հեռուստակայան բացելուն. չէ՞ որ ֆինանսավորման խնդիրներ նրանք այլեւս չեն ունենա...

Կսկիծով ենք խոստովանում, որ մեր իրականության մեջ, երբ մոլեգնում են մեր ազգային խառնվածքին խորթ վայրագ շուկայի օրենքները, մշտապես պարսավվող երեսպաշտություն կոչվածը ինչ-որ չափով խամրել է: Այժմ ամեն ինչ վաճառվում է եւ գնվում: Այդ թվում՝ նաեւ խի՛ղճը: Մեր վայ-քաղաքական գործիչների համար քաղաքական շուկայում նորին մեծություն երեսպաշտությունը նրանց «անկախ» ու կուրաց գոյության գրավականն է: Բայց չէ՞ որ սեփական խղճի հետ այս ստոր գործարքի ողբալի եւ հարաճուն բարձրացող գինը մեր՝ դեռեւս թույլ պետականության, հայ ժողովրդի ճակատագիրն է:

Եվ ահա, այսպիսի բազմաբարդ կացության մեջ, որում հայտնվել է երկիրը, որպես ամբողջ ջինջ երկնքում, հնչեց Ռուսաստանի Դաշնության Պետդումայի հայտարարությունը Ռուսաստան-Բելառուս միությանը միանալու Հայաստանի մտավորականության նախաձեռնությանն աջակցելու մասին: Թվում էր, թե այդ հայտարարությունը խորին իմաստավորման սկիզբ կդառնա. ինչպիսի՞ երկրի եւ ո՞ւմ հետ Հայաստանի հանրապետությունը կթեւակոխի 21-րդ դար: Բայց, ավա՜ղ, այն մարդիկ, ովքեր իրենց քաղաքական ընտրախավ են համարում, եւ պատշտոնական ՁԼՄ-ները (հանուն արդարության ասենք, որ ոչ միայն դրանք), մտածում են այլ չափանիշներով: Իրենց կուսակցության համագումարի ամբիոնից ոմանք ահաբեկում են մեզ, ակներեւաբար խորամանկելով, թե Հայաստանի մուտքը Ռուսաստանի կազմի մեջ կհավերժացնի ներկայիս իշխանություններին: Բայց չէ՞ որ խոսք անգամ չի կարող լինել Ռուսաստանի կազմի մեջ մտնելու մասին: Ինքնիշխան Ռուսաստանը մնում է Ռուսաստան, Բելառուսը՝ Բելառուս, իսկ Հայաստանը, միանալով նրանց միությանը, նույնպես ինքնիշխան կմնա: Ոմանք էլ իրենց ուսերին ծանր բեռ են վերցնում, հանդես գալով արդեն կայացած Ռուսաստան-Բելառուս միության այսպես կոչված միջազգային վերլուծաբան-դատավորի դերում՝ միաժամանակ զգուշացնելով, թե Հայաստանի միացումն այդ միությանը կսահմանափակի ՀՀ-ի պետական անկախությունը: Նրանք, ընդսմին, մշուշի մեջ են թողնում, «մոռանում են» նշել, թե անկախության ինչպիսի՞ սահմանափակումների մասին է խոսքը: Ռուսաստան-Հայաստան ռազմավարական դաշինքն արդեն ամրագրել են երկու երկրների նախագահները: Նշանակում է՝ խոսքը տնտեսական անկախության սահմանափակումների մասին է, այն անկախության, որը պատշտոնորեն գործադիր իշխանությունների մեղքով, ըստ էության, արդեն իսկ վտանգավոր է, ընդ որում՝ առանց Ռուսաստանի կամ Բելառուսի որեւէ մասնակցության:

Կարելի է էլի քննարկել քաղաքական գործիչների ասածները, բազմաթիվ հրապարակումները, որոնք ի սկզբանե կամ վաստաբանում են Հայաստանի միացումը Ռուսաստանի եւ Բելառուսի միությանը, կամ էլ, ընդհակառակը, դրա մեջ տեսնում համազգային խորագույն ճգնաժամից դուրս գալու միակ հնարավորությունը: Բայց, թերեւս դրա կարիքը չկա, քանի որ մեծավ մասամբ դրանք՝ հար եւ նման են իրար մի հատկանիշով՝ զգացմունքայնությունից զատ անկախ պետականության շահերից բխող որեւէ լուրջ վերլուծական լիցք չեն պարունակում: Խնդիրը հարկավոր է դիտել միանգամայն այլ հարթության մեջ: Չէ՞ որ խոսքն այլ բանի մասին է. ի՞նչ ճանապարհով պետք է Հայաստանի Հանրապետությունը հզորանա թե՛ տնտեսապես, եւ թե՛ ռազմականապես, ինչպե՞ս է պետք համախմբել ազգը, հասնել Արցախյան հարցի արդար լուծմանը, ապահովել Հայրենիքի եւ Սփյուռքի միաբանությունը, ինչպես կենսագործել «Միացյալ ազգ, միացյալ Հայրենիք» հայոց դարավոր իղձը: Կարեւոր է որոշել, թե ո՞ր երկրների հետ է, որ համընկնում են մեր աշխարհաքաղաքական շահերը, եւ իմաստավորել, թե ՀՀ սահմանադրական կարգի հիմքերի, ինչպես նաեւ՝ միջազգային իրավունքի նորմերի համաձայն որքանո՞վ է հնարավոր Հայաստանի մուտքը այս կամ այն միություն:

Կասկածից վեր է, որ Հայաստան, Ռուսաստան, Բելառուս ինքնիշխան պետությունների միացյալ ջանքերը տարբեր բնագավառներում, նեռայալ՝ ռազմականը, երկրների ներուժի համատեղման, ինչպես նաեւ շուկայական մեխանիզմների օգտագործման միջոցով կապահովեն մասնակից պետությունների կայուն զարգացումը:

Բախտորոշ այս հարցի վերաբերյալ իրենց կարծիքը պիտի արտահայտեն հանրապետությունում հայտնի եւ արժանավոր մարդիկ, ովքեր, չգիտես ինչու, դուրս են եկել մեծ քաղաքականությունից, քաշվել սվերում եւ, արդեն քանի տարի լռում են՝ հայտնի չէ, թե ումից խռովելով: Իսկ ժողովուրդն սպասում է նրանց խոսքին ու գնահատականին:

Խիստ կարեւոր է իմանալ Սփյուռքի ավանդական ազգային կուսակցությունների կարծիքը եւ վերաբերմունքը Ռուսաստանի եւ Բելառուսի հետ Հայաստանի միության մասին, մանրամասն ծանոթանալ կուսակցությունների ղեկավարների գնահատականներին ու մոտեցումներին խնդրո առարկա հարցի վերաբերյալ, ինչպես նաեւ այն պետությունների քաղաքական ընտրախավերի կարծիքը, որոնց քաղաքացիներն են իրենք:

Հայաստանի Հանրապետության ապագայի նկատմամբ իր վերաբերմունքը պետք է հստակորեն ծեւակերպի իր ծանրակշիռ խոսքն ասի նաեւ կառավարությունը. ինչպիսին է տեսնում Հայաստանը 21-րդ դարի բեմին ինքնիշխան հեղափոխության դարի, որը համամարդկային ունեցվածք է դարձել, որի միջոցով յուրաքանչյուրն կարող է հաղորդվել վաղնջական ժամանակներից ի վեր ժողովուրդների կուտակած ողջ գիտակցությանը: Մեր կառավարությունը պարտավոր է հասարակությանը իրազեկ պահել, թե ինչպե՞ս է պատկերացնում անխոհեմաբար ավերածի վերականգնումը, խզվածի միավորումը, Հայրենիքը պարտադրյալ լքած մեր շուրջ մեկ միլիոն հայրենակիցների դարձը դեպի հարազատ օջախներ: Եթե հենց հիմա չունենք այս ամենը, ապա, ամենամոտ ապագայում աշխարհում ամենահնագույն քաղաքակրթություններից մեկը՝ հայկական քաղաքակրթությունը կհայտնվի համաշխարհային պատմության ծամփեզրին...

Բնութագրելով հանրապետության էկոնոմիկայի եւ ֆինանսների վիճակը, ես գիտակցաբար չհիշատակեցի նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանի անունը: Եվ ահա թե ինչու:

Իր հրապարակային ելույթներում նախագահը բազմիցս նշել է, թե տնտեսության ղեկավարումը գործադիր իշխանությունների անելիքն է: Այս ճշմարտությունը երբեմն գաղտնիք չի եղել ընտրողների համար: Անկախության անցած վեց տարվա ընթացքում գործադիր իշխանություններն իրենց «բարեփոխումներով» հասան արդյունաբերության ոչնչացման, ըստ էության՝ երկրի տնտեսական ներուժի կորստյան եւ արտադրության ամբողջ կառուցվածքի որակապես խոր նահանջի: Իմ ներկա խնդիրը չէ այս ամենում նախագահի անձնական պատասխանատվության չափը որոշելը: Դա այլ խոսակցության նյութ է:

Ակնհայտ է մի բան, նախագահի վերաբերմունքը Ռուսաստանի եւ Բելառուսի միությանը Հայաստանի անդամակցելուն, նրա գործողություններն այդ ուղղությամբ պետք է հասկանալի լինեն բոլոր հայերին: Որոշվում է ազգի ճակատագիրը: Եվ երեսպաշտությունն այստեղ՝ անընդունելի է...

ԱՐՏԱՇԵՍ ԳԵՂԱՄՅԱՆ,
ՀՀ ԱԺ պատգամավոր,
«Ազգային միաբանություն»
հասարակական-քաղաքական
կազմակերպության նախագահ

ԱԶԳ

Միջազգային

Նաթեղ Նուրին՝ Իրանի խորհրդարանի նախագահ

Ինչպես արդեն գրել ենք, 1997 թ. հունիսի 1-ին Իրանի խորհրդարանի նախագահ վերընտրվեց Ալի Ակբար Նաթեղ Նուրին: Էվեարկությանը մասնակցող 243 դատգամավորներից ձայների 211 կողմ, 32 ձեռնպահ հարաբերությամբ:

Ըստ Իրանի խորհրդարանում գործող կանոնակարգի, յուրաքանչյուր տարի, մայիսի վերջին ընտրվում է նոր նախագահ եւ նախագահություն: Նախորդ 4-րդ խորհրդարանում հաշվի առնելով, որ խորհրդարանում պահպանողականները գերակշիռ մեծամասնություն էին կազմում, այդ ընտրություններն անցնում էին աննկատ եւ առանձնապես ուշագրավ չէին: Սակայն ներկա 5-րդ խորհրդարանում պատկերը միանգամայն այլ է:

Իրանի իսլամական գաղափարախոսական շրջանակներում առկա քաղաքական 4 հոսանքների ա) պահպանողականների, բ) չափավորականների, գ) ձախերի եւ դ) աջ ծայրահեղականների ակտիվ մասնակցությամբ 1996 թվականի մարտի 8-ի խորհրդարանական ընտրությունների արդյունքում կազմավորվեց 5-րդ խորհրդարանը ուժերի հետեւյալ հարաբերակցությամբ. պահպանողականներ ավելի քան 100, չափավորականներ շուրջ 80, ձախեր 20 եւ 50-ի չափ անկախներ: 5-րդ խորհրդարանական ընտրություններում գլխավոր ուժերի միջեւ պայքարը սուր եւ լարված բնույթ կրեց ինչը մեծ մասամբ պայմանավորված էր 1997 թ. մայիսին կայանալիք նախագահական ընտրություններով: Այդ էր պատճառը որ երկրի այդ ժամանակվա հզորագույն քաղաքական հոսանքը պահպանողականները, որոնք կարելի է ասել, տնօրինում էին երկրում քաղաքական եւ տնտեսական ազդու լծակների, գործի դնելով դրանք, այդ թվում ընտրությունները վերահսկող «Շորայե Նեգահբանի» («Պահապան խորհուրդ») հնարավորությունները, նպատակ ունեին կրկին համոզիչ հաղթանակի հասնել: Վերջինիս աջակցությամբ ընտրությունների օրենքների խախտման պատճառաբանությամբ չեղյալ հայտարարվեցին 22 ընտրատարածքների ընտրությունները, որոնցում զգալի հաջողություններ էին արձանագրել չափավորականները:

Թեեւ պահպանողականների գործադրած անտաք ջանքերը արդյունք չանցան եւ նրանց հաջողվեց փոքր տարբերությամբ խորհրդարանում մեծամասնություն կազմել, եւ խորհրդարանի նախագահ ընտրվեց այս հոսանքը ներկայացնող Նաթեղ Նուրին բայցեւայնպես, վերջին հաշվով պահպանողականները այդ ընտրություններում պարտություն կրեցին, որը սկիզբ է ավելի մեծ պարտության հանգի նրանց չհաջողվեց արձանագրել ցանկալի արդյունք, օրենսդիր իշխանությունը տնօրինել անմնացորդ: 5-րդ խորհրդարանի աշխատանքները սկսվելուց հետ անց այստեղ պաշտպանները ձեւավորվեցին պահպանողականների Հզբոլլահի միությունը եւ չափավորականների ու ձախերի միությունները: Հզբոլլահական կուսակցությունը ունի խորհրդարանական խմբակցություններ:

1997 թ. փետրվարի 7-ին նիստ 22 բաժնոտ տեղերի համար տեղի ունեցած լրացուցիչ խորհրդարանական ընտրություններ, որոնք կարեւորվում էին նախ խորհրդարանի դեկավար կազմի ընտրություններով եւ առաջ նախագահականով: Լրացուցիչ ընտրությունների վերջնական արդյունքով հաջողության հասավ Հզբոլլահական միությունը կուսակցությունը: Փաստորեն, խորհրդարանի գլխավոր ուժերի միջեւ հավասարակշռություն հաստատվեց: Այլ կերպ ասած, խորհրդարանի նոր նախագահության ընտրություններում զգալի մեծացան չափավորականների հնարավորությունները: Բացի այդ վերջիններիս փայլուն հաղթանակը նախագահական ընտրություններում անկախ դատգամավորներին դեղի չափավորականները կողմնորոշելու ազդակ կարող են հանդիսանալ: Թեեւ ստեղծված նման իրավիճակով է դայմանավորված ընդգծված հետաքրքրությունը խորհրդարանի նախագահության ընտրության նկատմամբ: Թեեւ իրական մամուլում եղան հրաղարակումներ, որ Հզբոլլահականների խմբակցության կողմից ներկայացվելու են թեկնածուներ թե նախագահի, եւ թե նախագահության անդամների համար, այդ թվում հոչաբոլեսլամ Աբդոլլահ Նուրիի թեկնածությունը որպես նախագահի, որը նախորդ ընտրություններում պարտություն էր կրել Նաթեղ Նուրիի հետ մրցակցության ժամանակ, այստեղ հանդես գալով Աբդոլլահ Նուրիի թեկնածությունը որպես նախագահի, որը նախորդ ընտրություններում պարտություն էր կրել Նաթեղ Նուրիի հետ մրցակցության ժամանակ, այստեղ հանդես

Հզբոլլահական կուսակցության դատգամավորներ

գալով Աբդոլլահ Նուրիի թեկնածությունը որպես նախագահի, որը նախորդ ընտրություններում պարտություն էր կրել Նաթեղ Նուրիի հետ մրցակցության ժամանակ, այստեղ հանդես

Մշակույթ

ՄԵԾԱՐՈՒՄ

70 տարվա ընթացքում հասունացած սցենար

Հունիսի 2-ի երեկոյան ՆԳ մշակույթի տանը հավաքված մարդիկ իրար բարեւ տալիս ավելացնում էին ես եմ: Դա Ֆրունզե Դովլաթյանի կյանքի աստղային անմոռանալի պահերից մեկն էր: Այդ օրը նա եւ գլխավոր հերոսն էր եւ գլխավոր հանդիսատեսը: Այդ օրը ինքը բազմամյա փորձ ունեցող ռեժիսորը պիտի ականատես լիներ լսված մի բանի, թե ինչպես երկու ժամվա ընթացքում նկարահանվեց մի «ֆիլմ», որի սցենարը, սակայն, հասունանում է արդեն 70 տարի: Ամեն ինչ սկսվեց 1927 թ-ին, երբ Դովլաթյանների ընտանիքում ծնվեց մի արու զավակ եւ եկավ ամբողջացավ հունիսյան այս տոթ օրը «քարեր գցելու» օրը: Թեպետ, «քարեր հավաքելը» դեռ ավարտված չէ (դեռ կա «Պատը» ֆիլմը): Ժամանակն ու տարածությունը կանգ առան, որպեսզի ամփոփվի կատարված գործը ու դրա արդյունքը: Այս առիթով ակամա հիշեցի Դեբյուսիի խոսքը Կոմիտասի վերաբերյալ. «Եթե Կոմիտասը լրեր միայն Անուշին, արդեն այդ բավական էր նրան մեծ համարելու համար»: «Եթե Դովլաթյանը նկարած լիներ միայն «Քարեր, ես եմ»-ը... Եկավ օրը, երբ Դովլաթյանը պիտի թերեւս ավելի զարմանար, քան զարմացներ: Նրա երախտագետ բարեկամներն ու ընկերները Մոսկվայից նկարահանել եւ բերել էին Դովլաթյանի ծտերիմ գործընկերների Մարգարիտա Տերեխովայի Ռոյան Բիկովի, Արմեն Ջիգարխանյանի, Ռուստամի կինոաշխարհիկ սանձարձակ նախագահ Դեմիսի Աբրահամյանի շնորհավորական խոսքն ու մաղթանքները: Հետաքրքիր էր Արմեն Ջիգարխանյանի բնութագրումը. «Դովլաթյանը նման է այն մարդուն, որ խաչբառ լուծելիս բառի մեջ 3 սխալ է անում, բայց միշտ էլ հաջողացնում է լուծել խաչբառը»: Դովլաթյանին ողջունեցին եւ շնորհավորեցին ՆԳ փոխնախարար գեներալ Հայկ Հարությունյանը, Մալյանի անվան թատրոնը, Գյումրիի Վանաձորի թատրոնները, Սունդուկյանի անվան թատրոնը, Դովլաթյանի ֆիլմերի երաժշտության հեղինակ Մարին Վարդազարյանը, դերասաններ Ազաս Գասպարյանը, Անետ Հարությունյանը: Հիշեցին «խենք», «գժախելառ» (Դովլաթյանի սիրած բառերը) օրերը մկրտությունը էջմիածնում, որի համար Դովլաթյանին ֆիչ էր մնում հեռացնեին կուսակցությունից. «Քարեր, ես եմ»-ի ցուցադրումը Փարիզում. «Երկունք» ֆիլմի նկարահանումները: Եվ նորից, ինչպես տասը տարի առաջ, Ֆրունզե Դովլաթյանի ուսերին հայտնվեց Փարաջանովի բանտում կարած թիկնոցի սվերը, որը կարվել էր Ֆելինիի համար, բայց առաջին անգամ կրելու դատիվը վիճակվեց Դովլաթյանին: Այստեղ էին Դովլաթյանի ուսանողները, ավարտածներն ու ավարտողները, բոլորն էլ անխուսափելիորեն Դովլաթյանին սիրահարված: Յուրաքանչյուրը բերել էր իր լավագույնը «մի նշխար հոգուց եւ մասունք սրից»: Ու խոնարհվում, հատուն ցորենի պես խոնարհվում է Դովլաթյանի ալեհեր գլուխը, խոնարհվում սեփական ծանրությունից, եւ կնճիռներից ակոսով դանդաղ սահում է երջանկության արցունքը:

Ինչ խոսք, երեկոյի կարեւոր եւ ազդեցիկ պահերից մեկը «ՀՀ նախագահի» շնորհավորական խոսքն էր «Թե արդյո՞ք Հայաստանի ներկա տնտեսաքաղաքական պայմաններում մեզ հարկավոր է կինո» թեմայով (Արամ Սուքիասյանի կատարմամբ). «Սիրելի տիկնայք եւ պարոնայք... ես

չէի ցանկանա ձեր տնական տրամադրությունը փչացնել, բայց արդեն սովորություն է...»:

Ասում են, երբ տարը մեծ չի լինում, մարդիկ մի մեծ էար են դնում մեջտեղում, որ մեծարեն: Իսկ երբ տարը մեծ կա եւ չի մեծարվում, օջախը մարում է: Ուստի կցանկանայի անդրադարձնել «կրակը հանողների», այս երեկոն կազմակերպողների անունները: Կարինե Մուրադյան, Ստեփան Շահինյան, Սուսան Աբրահամյան, Կարինե Ոսկանյան եւ, իհարկե, ՆԳ նախարարության ողջ անձնակազմը:

Դովլաթյանը «անբուժելի լավատես է», բայց ցանկացած լավատեսություն, եթե չի դրվում իրական հիմքերի վրա, վաղ թե ուշ դատապարտված է մարելու: Ուստի, Դովլաթյանը կոչ է անում «տեր կանգնել հայ կինոյին, գոնե մի փոքր ժամանակ, հետո մենք յոլա կգնանք»: Եվ վերջում, իբրեւ արդեն իսկ հայ կինոարվեստի նահապետ, նա իր օրհնության խոսքն է ասում եկող սերունդներին եւ իր շաս սիրելի երեւանին. «Թող երջանիկ ապրը լինի ձեզ հետ, թող հրեշտակները երգեն, երգեն, եւ Երեւանը դառնա լույսերի աշխարհ, ծիծաղի, ուրախության աշխարհ, իմ լավ, իմ հաղար Երեւանը»:

ԻՌԵՆ ՍԱԲՈՅԱՆ

Կինոգործիչները հրավիրում են արտահերթ պլենում

ԵՐԵՎԱՆ, 3 ՀՈՒՆԻՍ ԱՐՄԵՆՊՐԵՍ. «Հայֆիլմ» եւ «Հայֆ» կինոստուդիաների հեռացա ճակատագիրը որոշելու համար, որոնք շուրջ երկու տարի է դժբախտությունով նախատեսված օրմանների բացակայության դատապարտում դիմանալ են գործունեությունը Հունիսի 3-ին հայ կինոգործիչները «Հայֆիլմ»-ում գումարել էին խորհրդակցություն:

Երդյուռ ունեցողները, ապրադարանալով արկա խնդիրներին առաջարկում էին [illegible] տարբեր [illegible] գործ [illegible] եր [illegible] գործ [illegible] մի [illegible] ստեղծագործական միությունների [illegible] ներ [illegible] ֆում»:

Խոսվեց կինոյի մասին օրենքի ստեղծման կարեւորության մասին: Հայ կինեմատոգրաֆիայի զարգացման եւ զարգացման համար նշվեց պետական հովանավորության անհրաժեշտությունը:

Խորհրդակցությունում որոշվեց հունիսի 17-ին գումարել կինեմատոգրաֆիստների արտահերթ պլենում, որին կհրավիրվեն նաեւ նամակագրաստիպում [illegible] ստեղծագործական միությունների [illegible] ներ

ՄՇԱԿՈՒՅԹ

«Աշխարհը եւ մենք-97»

Փառատոնն սկսվեց

Հայաստանի եւ Արցախի քարտեզները «ձեռք-ձեռքի», սրտիցակ, խաղաղ շրջագծով օղակված աշխարհի երաժշտական բարձրարվեստ հիրությունների պետական դրոշներից «կարված» գոտիներ են կաղել: Սա «Արամ Խաչատրյան» սրահի ենթաբեմի ճակատը զարդարող խորհրդանիշն է: Փառատոնի խորհրդանիշը: «Աշխարհը եւ մենք»: Հայաստանի դրոշն էլ կա: Համայն մարդկությանը մենք էլ մերն ենք ասել: Փոքրաթիվ ազգի համար Կոմիտասն ու Արամ Խաչատրյանն էլ բավական են, բայց քանի՞սն ունենք... Չթվենք, քանի որ համերգաշարի նոտաակը հիմնականում այլոց երաժշտության հայեցի վերիմաստավորումն է, հայի հոգով վերաբերածը, բայցեւ ռուս, գերմանացի, ավստրիացի, ֆրանսիացի, ամերիկացի եւ այլ հանճարներին արժանին հատուցելը:

Հաստատուն, որ, ըստ կանոնի, աշխարհի տիրակալն է եւ ինչպես կանոնում՝ նրա սկիզբն ու վերջը, գեղեցկության, սիրո, հրաշալիքի ճանապարհը չոքեցած է փակի: Միջնադարյան պոեզիայի եւ երաժշտական անարատ բանահյուսության օրֆյան այս համադրությունը հակառակ դեպքում անիմաստ կլինի:

«Կարմինա բուրանայի» երրորդ փառատոնային կատարմանը եկա արդեն բյուրեղացածը լսելու ակնկալիքով: Համեմատելու համար նախօրյակին Բեռլինի «Deutsche oper» թատրոնի երգչախմբի եւ նվագախմբի, մեներգիչներ Գունդուլա Յանովիցի, Գերհարդ Շոլցեի եւ մեծն Դիտրիխ Ֆիշեր-Դիսկաուի ձայնագրությունը լսեցի: Դիրիժորը Էուգեն Յոխումն էր: Մի խոսքով, քմահաճ ունկնդիր էի դարձել: Չթաքցնեմ, հիասթափվելու վախն ինձ չէր լքում, բայց ձայների առաջին իսկ տարափը գերմանական ճշմարտությանն ու մաքրությանը իր անկեղծությունն ու գալիք ճակատագրի համար տագնապն էր հակադրում: Լորիս Ճգնավորյանի առաջ պարտիտուր էր դրված, որի թերթելը գրեթե չնկատեցի: Նյութը լավագույնս վերարտադրած էր: Նվագախումբն, ինչպես միշտ, ամենաճկունն էր: Նրա ստեղծած գունախաղը, կարծես, սնում էր երգչախմբին, որ սովորականից բարձր հնչյուններից այս անգամ արդեն չէր վախենում: Նրա թե՛ առանձին օղակները, թե՛ ամբողջն էին հասակվել, եւ սա խմբավար Գեւորգ Մուրադյանի ջանադրության արդյունքն էր: Տպավորիչ էր նաեւ Շոթա Վարդանյանի ղեկավարած մանչուկների երգչախումբը:

Գանք մենակատարների եռյակին, որ վերոհիշյալ գերմանացիների կենցաղային ու ստեղծագործական անդորրը երբեմն չի վայելել, նրանց տեսածից ու լսածից հեռու է եւ այսօրվա լարված, ընչազուրկ պայմաններում հոգեւոր եւ ֆիզիկական գերխնդիր պիտի լուծեր: Հոգեւորը գեղագիտականն էր, ֆիզիկականը, ըստ իս, գերմանական դպրոցին հատուկ մարզվածությամբ տրվող այն հմտությունն էր, որ դասական բոլոր չափանիշներով ընդունված բարձր հնչյուններից ավելի բարձրն է մատչելի դարձնում: Փորձված բարիտոն Կոնստանտին Սիմոնյանը բացեց իր տեխնիկական շուրջ 25 տարվա զինանոցի թախտոցները, լիրիկական-կոլորատուրային սոպրանո Գայանե Գրիգորյանը ձայնածավալի խնդիր ընդհանրապես չուներ, ինքուր էր, եթերային, իսկ կիսաստրոֆեսիոնալ Սուրեն Զուրաբյանը ժողովեց ամբողջ կամքը եւ իրեն բաժին հասած գրոտեսկային հատվածում թեեւ վախվորած, բայց միանգամայն անկեղծ էր:

Լ. Ճգնավորյանը մենակատարների հետ
Ձախից աջ՝ Կ. Սիմոնյան, Գ. Գրիգորյան, Ա. Զուրաբյան

Կերպարներն ամբողջացան թե բախվելիս թե աշխուժորեն «զրուցելիս», թե զվարճանալիս կամ թախծելիս՝ օղակները միասնական էին: Հետեւելով մերոնց անկեղծությանը՝ գերմանացիների արհեստավարժության ու կատարողական անվիճելի նրբության մասին մոռացել էի: Անուղղելի ռոմանտիկս մտով 21-րդ դարում էի, երբ, գուցե միամտորեն, կարծում եմ, թե մեր արվեստագետների կյանքն ավելի բարվոք կլինի, եւ նրանց մենաշնորհ ջերմությունն ու անմիջականությունը կհամեմվեն այսօր արդեն սաղմնավորված արհեստավարժության եւ չափի նուրբ զգացողության համալիրով: Կարլ Օրֆի «Կարմինա բուրանա» կանտատի փառատոնային կատարումն այս առումով հուսադրող էր:

ՎԱՐՈՒԺԱՆ ՊԱԼՈՒՅԱՆ

ՀԱՄԱՌՈՏ

«Հայկական ջարդը եւ ՄԱԿ-ը»

Ֆրանսիական «Կոմոլեխ» հրատարակչությունը լույս ընծայեց Վարուժան Ասատրյանի «Հայկական ջարդը եւ ՄԱԿ-ը» ծավալուն աշխատությունը: Տասը տարի շարունակ Վարուժան Ասատրյանը անխոնջ հետեւել է Ազգերի միությունում հայկական հարցի շուրջ ծավալվող քննարկումներին եւ ինտրիգներին, ուսումնասիրել ՄԱԿ-ի հիմնադրումից ի վեր կուտակված փաստաթղթերը՝ սկսած 1948-ից՝ թուրքական մեղադրանքների դեմ տարվող համառ պայքարից, վերջացրած բրիտանական փորձագետ Բեն-ամին Ուայթեմերի զեկույցի ընդունմամբ 1985-ին: Գիրքը բացահայտում է կուլիսային գործարքները եւ ճնշումները, խաղաթղթերը, թուրքական դիվանագիտության օգտագործած միջոցները: Գիրքը հետաքրքրություն է ներկայացնում ոչ միայն հայկական հարցով հետաքրքրվողների համար, այլեւ լույս է սփռում նաեւ Ռուանդայում եւ Բոսնիայում ստեղծված համանման դրության վրա: Գրքի նախաբանում արգենտինացի խաղաղագետ Ադոլֆ Պերես Էսկիվելը (Նոբելյան մրցանակի դափնեկիր) նշել է. «Իհարկե դեռ շատ ջուր կխոսի մինչ հայկական ջարդը համաշխարհային ճանաչում կգտնա՝ իր մեղմուծկան ուժով եւ լուսաբանված հարցերի ընդարձակությամբ այս գիրքը նշանակալից հետք է այդ ոլորտում:

Փարիզի Հայկական մշակույթի տունը նոր գրադարան է բացում

Մայիսի 25-ին Փարիզի Հայկական մշակույթի տունը նոր գրադարանի բացումը: Շնորհիվ Զարուհի Դեմիրյանի ջանքերի, 6000 կտոր տպագիր նյութ՝ գրքեր, փաստաթղթեր, թերթեր դասակարգվեցին, նորոգվեցին եւ այժմ կարող են տրամադրվել ընթերցողներին: Բացի հայերենից այստեղ կարելի է գտնել ֆրանսերեն, ռուսերեն, անգլերեն, գերմաներեն տպագիր նյութեր, ինչպես նաեւ արաբերեն մի շարք փաստաթղթեր: Անհայտ բարեգործների եւ հենց իրենց հեղինակների նվիրատվությունների շնորհիվ գրադարանն իր տրամադրության տակ ունի մեծ արժեք ներկայացնող նյութեր՝ 1850 թվականին հրատարակված Լամարտինի ստեղծագործությունները, 1860 թվականին հրատարակված Հյուգոյի բանաստեղծությունները, «Pro Armenia» թերթ 1905-1917 թ. համարները Զորջ Կրեմանսոյի խմբագրմամբ, 1970-1980 թ.-ին Մոսկվայում եւ Լենինգրադում հրատարակված սովետական մամուլը: Գրադարանը կբահագործվի սառաբինա վեց ամսում:

ԱԶԳ

Մարզական

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

Երազանքները պետք է իրականացնել

Գտնում է Ռուսաստանի չեմպիոնը

Հեծանվորդ Գրիգոր Գրիգորյանի ելույթներին հաճախ ենք անդրադարձել: Մի քանի ամիս առաջ նա դարձավ Ռուսաստանի ձմեռային բաց առաջնության հաղթող եւ միանգամից իր վրա բեւեռեց հեծանվային սպորտի մասնագետների եւ լրագրողների ուշադրությունը: Վերջին ամիսներին նա պարում եւ մարզվում է Ռուսաստանում: Օրերս Սամվել Գեւորգյանի հուշամրցաբարում նրա մեկնարկը այնքան էլ հաջող չէր: Ինչո՞ւ:

– Սխալներ եղան: Երեւի կեսուժով հանդես եկա: Հույս ունեի վերջում մարզավիճակիս գագաթնակետին դուրս գալ, սակայն հաշվարկս սխալ դուրս եկավ:

– Հեծանվավազքը նախընտրել ես մանկո՞ւց, թե՞ կարելի է ասել, պատահմամբ ես նստել հեծանիվ:

– Երբեք չէի մտածում, որ հեծանվորդ կդառնամ: Ինչպես եւ հասակակից բոլոր տղաները, բակում ֆուտբոլ էի խաղում, այնուհետեւ հրաժարվեցի բասկետբոլով, լողով, նավարկությամբ: Մի օր փողոցում պատահաբար հանդիպեցի մարզչիս, որն էլ 1988 թ. ինձ հրավիրեց զբաղվելու հեծանվային սպորտով: Այսպիսով կյանքս կապեցի մարզածեւի հետ, որն ինձ շատ դուր եկավ:

–...եվ մի քանի տարի անց առաջինը դարձար Ռուսաստանի բաց առաջնությունում: Ի՞նչը քեզ օգնեց հաջող մրցել ուժեղագույն մրցակիցների հետ:

– Առաջին հերթին լրջորեն տրամադրվեցի: Բացի այդ, շատ էի ուզում աղացուցել՝ ինչի եմ ունակ, քանզի շատերը գտնում էին, որ անկարող եմ մեծ հաղթանակներ տանել: Երեւի թե ստացվեց:

– Ի՞նչ խոշոր մրցումներ են սպասում քեզ առջեւում:

– Հունիսի 4-ին սկսվելու է Տուլայի «Մեծ մրցանակի» խաղարկությունը: Այնուհետեւ, Իտալիայում մեկնարկելու է աշխարհի գավաթի խաղարկության 3-րդ փուլը, որին մասնակցությունս կախված կլինի ֆինանսից: Եվ հուլիսին՝ Մոսկվայում Ռուսաստանի ամառային բաց առաջնությունը: Առայժմ այս երեքը:

– Ինչպե՞ս ես մտադիր ելույթ ունենալ:

– «Մեծ մրցանակի» խաղարկությանը լավ եմ տրամադրվել: Իսկ մյուս մրցումներին նախապատրաստվելու ժամանակ կա եւ կախված է պատրաստակամությունից:

– Ես գիտեմ, որ Ռուսաստանում ոչ մի արհեստավարժ ակումբում ընդգրկված չես: Առաջարկներ չե՞ն եղել:

– Եղել են, բայց ոչ արհեստավարժ ակումբներից: Ինձ առաջարկել են պայմանագրով հանդես գալ Ռոստովի, Սամարայի եւ Տուլայի թիմերից, Ռուսաստանի հավաքականից: Բայց առայժմ հանդես եմ գալիս Հայաստանի թիմում:

– Հարցս հավաքականի մասին չէր, այլ ակումբի:

– Ոչ, առայժմ ակումբները ինձանով չեն հետաքրքրվել, քանի որ միջազգային մրցումներում՝ Եվրոպայի եւ աշխարհի առաջնություններում բախտս չի բերում: Երկու անգամ մասնակցել եմ աշխարհի առաջնության, բայց անհաջող: Առաջին անգամ «դավաճանեց» հեծանիվս, որի անսարքության պատճառով ուշացումով մեկնարկեցի: Իսկ երկրորդ անգամ՝ Կոլումբիա ժամանեցինք մեկնարկից կես ժամ առաջ. մինչդեռ պետք է մրցավայր հասնեինք 3-4 օր առաջ, եւ առանց հանգստանալու մասնակցեցինք:

Գրիգոր Գրիգորյանը եւ նրա մարզիչ Անդրանիկ Առուստամյանը մեկնարկից առաջ

– Ռուսաստանում հովանավորներ ունե՞ս, թե՞ ինքդ ես դրամ վաստակում տարբեր մրցաշարերում:

– Այնտեղ մրցաշարերին մասնակցելու համար են վճարում եւ բացի այդ մարզիչս է օգնում, աղահովել է բնակարանով, սննդով. քանի որ, ստացվում է նրա տղաներին եւս Ռուսաստանի չեմպիոն դարձրեցի:

– Նախընտրում ես հրապարակայի՞ն, թե՞ խոնդային հեծանվավազքը:

– Միանշանակ հրապարակայինը: Մրցածեւերից գիդը, արագավազքը՝ 1 կմ տեղից, 10 կմ ընթացքից, «իսալյանական» (օլիմպիական արագավազքը, 3 հեծանվորդ են մասնակցում յուրաքանչյուրը՝ մեկ շրջան):

– Ի՞նչ ես կարծում, քեզ կհաջողվի մասնակցել 2000 թ. Սիդնեյի օլիմպիական խաղերին:

– Շատ եմ ուզում: Դրա համար հարկավոր է աշխատել, աշխատել ու աշխատել: Երբեմն ասում են, թե երազանքներն իրականանում են: Երազում եւ ուզում եմ:

– Երեւի երազում ես նաեւ օլիմպիական չեմպիոն դառնալ:

– Չեմպիոն դառնալու համար հարկավոր է նախ շատ լավ հեծանիվ ունենալ: Իսկ եթե օլիմպիադայում նույնիսկ 10-րդ տեղը գրավեմ, պարզապես երջանիկ կլինեմ: Ամեն դեպքում, կծգտեմ իրականացնել երազանքս: Երազանքներն իրականանում են միայն շատ ծգտելու դեպքում:

– Մեր հեծանիվները շա՞տ են հնացած:

– Այո: Այժմ հեծանիվը շատ է կատարելագործվել եւ... թանկացել: Առաջատար մարզիկների հեծանիվները մինչեւ 4 հազար դոլար արժեն: Իսկ մեր ամենալավը՝ 500 դոլար, բնականաբար որակի համապատասխան նվազումով:

– Հրապարակային հեծանվավազքը կարելի՞ է կոմերցիոն մարզածեւ համարել:

– Այո: Արտասահմանում շատ կան հեծանվային տոտալիզատորներ եւ հեծանվորդների ելույթների վրա մեծ գումարներ են դրվում: Ի դեմ, այս տարվանից Ռուսաստանում եւս նման մրցավազքեր են կազմակերպվելու: Այնպես որ եւ հեծանվորդը կվաստակի եւ հանդիսատեսները հաճույք կստանան ու մրցումները հետաքրքիր կանցնեն: Իսկ Հայաստանում մեկ անգամ եղել են նման մրցումներ Հիշոյ եւ, ավտոխանութ կա «Օր 8-րդ»: Նրանք էին կազմակերպել: Մեզ մոտ պարզապես քիչ են բարձրակարգ հեծանվորդները, բայց նման մրցումները ցանկալի կլինեին:

– Առաջատար հեծանվորդներից ո՞ւմ ես հանդիպել:

– Հանդիպել եմ օլիմպիական չեմպիոն Ալեքսանդր Կիրիչենկոյին, օլիմպիադայի արծաթե մրցանակակիր Նիկոլայ Կոշին: Նրանց հետ մտերիմ եմ: Ի դեմ, նրանց հեծանիվները միջին կարգի են, բայց բավականին լավը (կարբոնից, պլաստմասսայից եւ այլ թեթեւ նյութերից):

– Ի դեմ, ո՞վ է քո կուռքը հեծանվավազքում:

– Երեւի առաջ դա Ալեքսանդր Կիրիչենկոն էր: Միշտ աշխատում եմ գործել նրա պես: Այժմ կուռքեր չունեմ:

– Եթե առաջարկեն հանդես գալ Ռուսաստանի հավաքականում, կհամաձայնե՞ս:

– Դրա համար նախ անհրաժեշտ է Ռուսաստանի քաղաքացի լինել, իսկ դա բազում խնդիրների հետ է կապված: Չեմ համաձայնի, քանի որ Հայաստանում եւս ինձ հետ մեծ հույսեր են կապում: Այնպես որ հույսը վերջինն է մեռնում:

Հարցազրույցը վարեց
ՏՐԱՅՐ ՆԱՀԱՊԵՏՅԱՆԸ

ԳՈՒՅԺ

Մահացավ Նիկոլայ Օզերովը

75 տարեկանում երկարատեւ եւ ծանր հիվանդությունից հետո կյանքից հեռացավ ռուս հանրահայտ մարզական մեկնաբան, մարզիկ, ԽՍՀՄ ժողովրդական արտիստ, թենիսի ԽՍՀՄ բազմակի չեմպիոն Նիկոլայ Օզերովը: Օզերովի հաղորդումները մարզական միջոցառումներից՝ աշխարհի եւ Եվրոպայի առաջնություններից եւ օլիմպիական խաղերից լսել են նախկին ԽՍՀՄ տարբեր սերունդներ: Նրա պրոֆեսիոնալիզմը յուրօրինակ ուսումնական ձեռնարկ էր մարզական բազմաթիվ լրագրողների եւ մեկնաբանների համար: Վերջին տարիներին, նույնիսկ գամված հաշմանդամի բազկաթոռին, Նիկոլայ Օզերովը զբաղվում էր հասարակական գործունեությամբ եւ հարազատ «Սպարտակ» մարզընկերության հարցերով, ինչին հավատարիմ մնաց մինչեւ կյանքի վերջին վայրկյանները:

ՀԵԾԱՆՎԱՎԱԶՔ

Արսեն Ղազարյանի վստահ ելույթները

«Հայաստան» ՄՄ հեծանվահրապարակում ավարտվեց ազատամարտիկ սպորտի վարպետ Սամվել Գեւորգյանի 5-րդ հուշամրցաբարը: Մրցումների առաջին օրը մասնակիցները ուժերը չափեցին խմբակային մրցավազքում 80 շրջանով եւ 16 միջանկյալ վերջնագծով: Այս մրցաձեւում լավագույն արդյունքը ցույց տվեց ֆիզկուլտուրայի ինստիտուտի ուսանող Արսեն Ղազարյանը (34 միավոր): Նրան 4 միավոր զիջեց Կարեն Սոլոյանը: 24 միավորով երրորդ տեղը գրավեց «Հայաստան» ՄՄ սան Վիկտոր Ավետիսյանը:

Երկրորդ օրը հեծանվորդները նախ հանդես եկան 4 կմ անհատական մրցավազքում հեռաքնդումով, իսկ այնուհետեւ խմբակային մրցավազքում դուրս մնալով: Սպորտվարչության բաժնական ծառայությունից հայտնում են, որ առաջին մրցումում հաղթեց Արսեն Ղազարյանը (4 ր. 57.55 վրկ): Երկրորդ եւ երրորդ մասնակիցները գրանցեցին հանդուրժելիորեն նույնը՝ Կարեն Սոլոյանը (5 ր. 03.59 վրկ) եւ Արտյոմ Գալստյանը (5 ր. 07.52 վրկ):

Երկրորդ մրցաձեւում լավագույնն էր Արսեն Ղազարյանը: Երկրորդ տեղը գրավեց Արտյոմ Գալստյանը, իսկ երրորդը՝ Վիկտոր Ավետիսյանը: Ի դեմ, մասնագետների ուշադրությունից դուրս չմնացին վերջինիս հաջող ելույթները: Այս հեծանվորդը լուրջ մրցակցություն է ցուցաբերում փորձառու մրցակիցներին:

Երրորդ օրը անցկացվեց 120 շրջան 24 միջանկյալ վերջնագծով հեծանվավազք: Այս անգամ էլ առաջինն էր Արսեն Ղազարյանը, երկրորդ ու երրորդ տեղերը գրավեցին Կարեն Սոլոյանը եւ Արմեն Գյոգալյանը:

Ընդհանուր հաշվարկում հաղթեց Արսեն Ղազարյանը, որն էլ նվաճեց փոխանցիկ գավաթը: Հաջորդ տեղերը գրավեցին Կարեն Սոլոյանը եւ Արտյոմ Գալստյանը: Այս մրցաշարը նախապատրաստական դարձավ հունիս եւ հուլիս ամիսներին Բելգիայում ու Հունաստանում կայանալիք միջազգային մրցումներից առաջ:

ԹԵՆԻՍ

Հավակնորդների շրջանը նեղանում է

Մոտ 2 ժամ դադարեցվեց ամերիկացի թենիսիստուհի Մոնիկա Սելեշից հաղթելու ֆրանսուհի Մերի Պիրսին: Երկու սեթերում (6-4, 7-5) նա դարտության մատնեց ֆրանսուհուն եւ դուրս եկավ Ֆրանսիայի բաց առաջնության քառորդ եզրափակիչ: 25-ամյա Ամանդա Կոյոցերը հազվադեպ է հաջող մասնակցում մեծ մրցումներին: Այս անգամ նա հաջող հաղթահարեց 4-րդ շրջանը, հաղթելով իտալուհի Կոնչիտա Մարտինեսին (6-7, 6-4, 6-3):

Տղամարդկանց մրցաշարում կիեւցի Անդրեյ Մեդվեդեւը զիջեց բրազիլացի Գուստավո Կուերտենին դժվարին 5 սեթանոց խաղում: Հենց այս թենիսիստին քառորդ եզրափակիչում կհանդիպի ռուսաստանցի Եվգենի Կաֆելնիկովը: Նրա ադագա մրցակիցը 66-րդն է համաշխարհային ասպիճանակարգում, սակայն դա նրան չէր խանգարել ավելի վաղ հաղթելու հողաշածկ կորտերում լավագույն խաղացողներից մեկին ավստրիացի Տոմաս Մուստերին:

Իսպանացի Սերխի Բրուգերան 5 սեթերում հաղթեց ամերիկացի Մարկ Չանգին եւ հաջող փուլում կհանդիպի ճարտկոցի Ֆիբեռ Ռազինին: Վերջինս չիլիացի Մարսելո Ռիոսի դեմ խաղում խուճապի մատնվեց գոյց տվեց բարձր խաղ եւ իրենից ուժեղ մարզիկին զրկեց դարարը շարունակելու իրավունքից (6-2, 6-1, 5-7, 7-6): Քառորդեզրափակիչի մնացած զույգերը կազմեցին Պատրիկ Ռաֆթերը (Ավստրալիա) եւ Գալո Կլանգոն (Իսպանիա): Մագնուս Նորմանը (Շվեդիա) եւ բելգիացի Ֆիլիպ դե Վուլը:

Ֆրանսիայի բաց առաջնությունում, որն անց է կացվում «Ռոլան գարոս» մարզադաշտում, քառորդ եզրափակիչում, հունիսի 3-ին հանդիպեցին ռուսաստանցի Եվգենի Կաֆելնիկովը եւ Գուստավո Կուերտենը Բրազիլիայից

Առաջին անգամ մեծ մրցանակի խաղարկություններում 8 լավագույնների դայտարին կմիացան Մարոկկոյի եւ Բելգիայի դասվիրակները: Իսկ Գուստավո Կուերտենն ընդհանուրում այս փուլում դարձավ առաջին բրազիլացին վերջին 29 տարիների ընթացքում:

Անգլիացիների կարեւոր հաղթանակը

Անգլիայի հավաքականը աշխարհի առաջնության ընտրական մրցաշարում չափազանց կարեւոր հաղթանակ տարավ, Լեհաստանի խոժոյ խաղալով 2-0 հաշվով հաղթելով այս երկրի հավաքականին: Արդեն 4-րդ րոպեին Ալան Շիրերը դիպուկ հարվածով լոնեցրեց մարզադաշտի 30 հազարանոց տրիբունաները: Այնուհետեւ, նա կարող էր խփել 2-րդ գոլը, սակայն չիրացրեց 11 մ հարվածը, որը ինքն էր վստակել: Հյուրերը հսկում էին հանդիպման ընթացքը եւ երկրորդ խաղակեսում բազմիցս կարող էին հասնել հաջողության: Այնուամենայնիվ, պահերից մեկում հիանալի խաղաց Ռոբերտ Լին եւ վճռական հարվածի իրավունքը տվեց Տեդդի Շերինգենին, որը չվրիպեց 2-0:

Երկրորդ խումբ	Խ	Հ	Ո	Պ	Գ	Մ
1. Իտալիա	6	5	1	0	11-1	16
2. Անգլիա	6	5	0	1	11-2	15
3. Լեհաստան	5	1	1	3	3-8	4
4. Վրաստան	3	0	0	3	0-5	0
5. Մոլդովա	4	0	0	4	2-11	0

ԱՄՆ-ի բասկետբոլի ազգային առաջնության եզրափակիչ խաղում հունիսի 1 հանդիպեցին «Չիկագո բուլզ»-ի եւ «Յուտա ջազ»-ի բասկետբոլիստները: «Չիկագո»-ն լարված պայքարում եւ դեռեւս Ռոդմանն է պայքարում գնդակի համար «Յուտա»-ի խաղացող Էնթոնի Քերի հետ

ԱԶԳ

Օրվա հետքերով

ԺՐԱՍԼ

Ուկրաինայի նվաճումները արտաքին դիվանագիտության ասպարեզում

Պապան Ալեքսանդր Բ-ի հերթական ասուլիսը

1997-ի գարունը Ուկրաինայի Հանրապետության արտաքին դիվանագիտության ասպարեզում աննախադեպ հաջող մի ցատրա է. որի ոլորտները խոստանում են լինել բազմաբնույթ: Դատելով իմաստներից նախ Կոմոսանցա բաղամում հանդիպում են Ուկրաինայի եւ Ռուսիայի նախագահները եւ լուծում երկու երկրների միջեւ եղած փշոտ խնդիրները: Ապա Բաստոնիայում (Տալլինում) հավաքվում են նախկին խորհրդային մերձբալթյան, ինչպես նաեւ Լեհաստանի եւ Ուկրաինայի ղեկավարները եւ զգալի համաձայնության մի շարք կարեւոր հարցերի շուրջ: Այնուհետեւ մայիսի 20-21-ին, արդեն առաջին հանդիպումն են Լեհաստանի նախագահ Այեքսանդր Կվասնեւսկին եւ Լեոնիդ Կուչման, ստորագրում այսպես կոչված «Միություն եւ փոխըմբռնում» անվամբ դարձանագիր, որով մեկընդմիշտ լուծվում է նաեւ տարածքային ամբողջականության խնդիրը: Վերջին դարձանագիրը բավականին հոչակավոր մի փաստաթուղթ է, որում արձանագրված են Ռուսի բի արբան բոլոր հակասությունները: արձանագրված լեն ուկրաինական փոխհարաբերությունների զարգացման ընթացքը: Այդոլիսիներից են այսպես կոչված «Վիլայի ստերացիան» (1947 թ.) որի իրականացման ընթացքում սահմանամերձ գոտում բնակվող հարյուր հազարավոր ուկրաինացիներ տեղահանվեցին հյուսիս եւ արեւմուտք: Հանրագիր կոչվող 1942-43 թթ-ին Գոլոդոմոր սովի ցեղասպան բարձրաձայնվեցին եւ նույնպես ենթարկվեցին տեղահանման: Այնուամենայնիվ, ի մի բերելով բոլոր փաստաթղթերը: նշված դարձանագիրը ստորագրվեց եւ դեռ ավելին: այսօր օրակարգ է մտել Բալթիկ սեւծովյան մեհանական գոտու ստեղծման գաղափարը: որը նախատեսվում է Օդեսայից հասցնել մինչեւ Գդանսկ նավահանգիստը: Գոտու ստեղծումը բարենպաստ նախադրյալներ կարող է ստեղծել Ուկրաինայի հեռ առեւտրական կապերի ունեցող անդրկովկասյան երկրների համար: Բանի որ ինչպես հայտնի է: աշխատանքն գործում են Իլիչեւսկ-Փոթի լաստանավային փոխադրությունները:

Եվ վերջ ի վերջո: Ուկրաինայի Հանրապետության գարնանային նվաճումների շարքը լրացվեց մայիսի 30-31-ին Կիեւում կայացած Բորիս Եցին-Լեոնիդ Կուչման հանդիպմամբ: որի նշանակությունը բնութագրվում է համաեվրոպական ընդարձակմամբ: Բանակցությունների սեղանին էին հանված բոլոր հակասությունները: հարցականները, բացակայությունները եւ այս ամենի շնորհիվ մի վերջակետ դրվեց տասուկրաինական լարված հարաբերություններին:

Գնահատելու համար Ռուսաստանը որպես անցյալ անցած դի խանդ հանձնարարվեց այն մտքին որ Ուկրաինայի հեռ գործ ունենալիս հարաբերվում է իրոք անկախ ու հզոր երկրի հեռ: Երկիր որն ունի սեփական բանակ ու հետաքրքրություններ: ինչպես ստարածաշրջանում այնպես եւ աշխարհում: Վերջապես ինչ վերաբերում է Սեւասեւոպոլ հարցին եւ ծովախորհրդում տեղակայված ՌԴ սեւծովյան նավատորմին: արդա կնքված պայմանագրի համաձայն, փոխանցվում է ՌԴ-ին վարձակալական պայմանով: Ռուսաստանին վաճառել է Ռուսաստանին եւ մեծ բերված 520 մլն դոլար գումարով նույնպես նվաճվել է եղած դարերը:

Ինչ վերաբերում է հայ-ուկրաինական հարաբերություններին: արդա 22-ում Ուկրաինայի Հանրապետության դեսպան Այեքսանդր Բոգդանի վկայությամբ: դրանք զարգանում են եռկողմ բանակցությունների հունով: Մեսիա Երեւանում: Ի: Ուկրաինայի խորհրդարանի պատվիրակությունը: ինչպես հայտնի է 1-5 սեպտեմբերին Կիեւ է մեկնելու Լեռն Տեր Պետրոսյանը եւ դա ըստ դարում Բոգդանի: խոսելով դաշնային իրադարձություն է: Նախատեսվում է ստորագրել հարց մեկ տասնյակ պայմանագիր: որոնք կոչված կլինեն աշխատացնելու հայ-ուկրաինական հարաբերությունները տնտեսության եւ մշակույթի ոլորտներում:

ԱՐԵՍ ԴԱՎԹՅԱՆ

Սեւանի ջրի ծավալը նվազել է 13 մլն խորանարդ մետրով

ԵՐԵՎԱՆ, 3 ՀՈՒՆԻՍ. ԱԳԵՆՍՊՐԵՍ. Սեւանա լճում կատարված նոր չափումների համաձայն ընթացիկ տարվա հունիսի 2-ին. անցած տարվա նույն ժամանակաձիրոցի համեմատությամբ ջրի ծավալը լճի հայելին գտնվում է 1867 մետր բարձրության վրա: «Հայլուսինից» ստացված տվյալներով լճի ջուրը նվազել է շուրջ 13 մլն խորանարդ մետրով:

Կարկտահարվել են Գորիսի ենթամարզի գանձրն ու այգիները

ԳՈՐԻՍ, 3 ՀՈՒՆԻՍ. ԱԳԵՆՍՊՐԵՍ. Հունիսի 2-ի լույս 3-ի գիշեր տեղացած կարկտը զբաղի վնաս է հասցրել Գորիսի ենթամարզի Որոսան բանակավանի տնտեսություններին: 15 ռոպե տեղացած ընկույզի մեծությամբ կարկտը ոչն ուղեկցվում էր հաճիով: ոչնչացրել է գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքերն ու ոլորատ այգիները: ավելի քան 12 հեկտար տարածք: Կարկտը մեծ վնաս է հասցրել նաեւ Կռանիձոր: Շինուհայր: Հալիձոր գյուղերի ցանքերին: Մայիսի 26-ից հետո սա երկրորդ դեպքն է ենթամարզում: երբ ցրեցելով ուղեկցվող տեղատարափ կարկտն ավերեց Գորիս հաղարի գրեթե բոլոր վայրերը: վնասեց բեհերը: բարիք հասցրեց ոչնչացրեց հասնելիք գյուղի խոտը եւ մասամբ եղջերավոր անասունները: Ծանրագույն հարուածներին վերացվում են ապրելի հետեւանքները:

Տրքանաստության մեջ են մտնելու նոր նմուշի 50 դոլարանոցներ

ՎԱՇԻՆԳՏՈՆ, 3 ՀՈՒՆԻՍ. ԱԳԵՆՍՊՐԵՍ. ՍՊՈՒՏՆԻԿ. ԱՄՆ. Ֆինանսների նախարարությունը հունիսին պատրաստվում է հայտարարել նոր նմուշի 50 դոլարանոց բրդաթղթերը տրքանաստության մեջ դնելու մասին: Այս մասին հաղորդում է «Իզվեստիա» գրախոսությունը: վերադարձնելով ԱՄՆ. դրամատների դատական հանձնաժողովից ստացված տեղեկությունները: Դեռեւս վաղ հաս դրամներում նկի հավասար Գրանթը: Բրդաթղթի դրամերանդարանը ասում: չասելով կլինեն վի: Նոր բրդաթղթի հաս ավելի դրամանիշ կլինի կեղծումներից:

Վահանովի տասը գոհերը

ՍՈՉՈՒՄ, 3 ՀՈՒՆԻՍ, ՓԱՍՏ. Ինչպես արդեն հաղորդվել է, Աբխազիայի Գալի շրջան են մեկնել ՌԴ ցամաքային զորքերի փոխհրամանատար, գեներալ-լեյտենանտ Այեքսանդր Սոկոլովը եւ երկրի զինվորական դատախազության ներկայացուցիչները: Նրանք դեռ է փորձեն տեղում դարձել այստեղ գրանցված արտակարգ դրության մասնակիցները: Դիտեցնենք, որ ավագ սերժանտ Արթուր Վահանովը կիրակի առավոտյան գնդակահարել էր իր հետ ծառայող տասը զինվորականների, երբ քնած էին վիրավորել էր եւ ապա իմքնասպանություն գործել: Ասում են մեկը մյուսի հետեւից անհիմն են հանդիպում այս հանցանքին առնչվող վարկածները: Ս. Վահանովը ոգելից խմիչքի ազդեցության տակ չի եղել միաժամանակ ոչում խնդիր չի ունեցել իր հետ ծառայողների շրջանում: Շնորհակալագիր, Վահանովը եղել է կարգապահ ու դրսեւորելու կրտսեր հրամանատար եւ ծառայությունը շարունակում էր իր կամքով կնքելով հաստատ դրդմանագիր: Հետաքրքիր է հանգամանքը, որ հանցագործության դրդապատճառ է դարձել հոգեկան խանգարումը: Մինչ հնչվում է այս դեպքը, հունիսի 2-ին Գալի շրջանի գրեթե նույն հասկանալում նոր միջադեպ դրանցվեց Խորհրդարանի ուժերի լոբ հոգանոց խումբը: գրահամեքենայով տեղափոխվելու ժամանակ դարձել է լեյտենանտ-ավագ ավանի վրա

ՀԱՅԻՆՏՈՒՐ

«Հայինտուր» գեղարվեստական ձեռնարկությունը (նախկին «Ինտուրիստ») կազմակերպում է Ձեզ համար 14-օրյա հանգիստ **Անթալիայում՝ Միջերկրական ծովի** ափին:

Ուղիղ չարտերային չվերթ Երեւան-Անթալիա-Երեւան:

Առաջին չվերթը **հունիսի 22-ին, հաջորդը հուլիսի 6-ին,** ինքնաթիռում՝ **14 օրը** մեկ:

Առաջարկում ենք 3,4,5 աստղանի, ծովափին մոտ գտնվող, հարմարավետ հյուրանոցներ՝ օրը երկու անգամ սնունդով:

Ցանկացողները կարող են դիմել գործակալություն **«Նախագծային կրաեր»** հյուրանոցային համալիրում, որ Ձեզ ապահովում է, իրոք, ինքնաթիռային հանգիստ: Ձեր տրամադրության տակ կլինեն 5 **սեստրոան,** բազմաթիվ բարեր, դիսկոթեկներ, սաունա, թուրքական բաղնիք, մարզական համալիրներ, լողավազաններ:

Վճարելով ուղեգրի արժեքը, դուք կարող եք վերը նշված ծառայություններից անվճար եւ առանց սահմանափակումների ուտելիք եւ զանազան խմիչքներ՝ վիսկի, ջին, գինի, գարեջուր եւ այլն:

Շտապեք ապահովել Ձեզ համար տեղեր, քանի որ դրանց քանակը սահմանափակ է:

Սպասում ենք Ձեզ.

Մեր հասցեն՝ ք.Երեւան 375010
Փավստոս Բյուզանդի թիվ 1
հեռ. 56-40-62, 58-22-82, 58-11-23

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետությունում Լիբանանի դեսպանատունը պատիվ ունի հայտնելու Հայաստանի ժողովրդին եւ Լիբանանի համայնքին, որ դեսպանության հյուպատոսական բաժինը ս.թ. հունիսի 1-ից սկսել է իր աշխատանքը: Ընդունելությունները կատարվում են շաբաթվա բոլոր օրերին, բացի շաբաթ եւ կիրակի օրերից, **ժամը 9:00-ից մինչեւ 12:00:**

Լիբանանը դեսպանատունը օգտագործում է այս հնարավորությունը հիշեցնելու Հայաստանում Լիբանանի համայնքին, որ դեսպանատունը գործում է հասցեների պրանցման ծառայություն:

Հյուպատոսարանի ժամանակավոր նստավայրի հասցեն է՝

«Դրազդան» հյուրանոց, 9-րդ հարկ, 92 սենյակ:

ԿՈՐԵԼ է

10 կարգավիճակով հայկական մի բազմաբնակարանային տուն առաքման ԱՊԸ-ի դրոշմը

ՎԱՃԱՌՎՈՒՄ է

սեփականաշնորհված խանութի տարածք 120 մ² Էրեբունի զանգվածում

Հեռ. 529748, ժամը 9.00-18.00

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՄԵՐԻԿՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆ

Հայաստանի ամերիկյան համալսարանը դիտավորություն է ընդունում ասպիրանտի գիտական աստիճան շնորհելու հասարակական եւ միջազգային առաջադիմության իրավունքի ներկայիս ոլորտի համար: Լիցենզավորված ոչ ոչնչական բուհերի հրավիրանները կարող են դիմել ասպիրանտուրան: դրանք ասպիրանտներ ձեւավորելու համար խնդրվում է դիմել ՀԱՀ-ի ընդունելության գրասենյակ:

Ուսումնական համակարգում միջազգային հարաբերությունների եվրոպական հարաբերությունների եւ անցյալ ամերիկյան իրավունքի համակարգերի իրավական ավանդույթներ եւ կանոնակարգերի ոլորտներում: **Միջազգային զարգացման իրավունքի** հրամանագրերում կարգավորվում տնտեսական տնտեսության միջազգային համաշխարհային իրավունքի եւ միջազգային գործարարության հիմնական դրույթներ ոլորտանացային հարաբերությունները: միջազգային ազգությունների ասեւորդ: մի բազմազգային ֆինանսական իրավունքը եւ վիճակի լուծման մեթոդներ: Համակարգման եւ միջազգային ասեւորդի իրավունք ծրագրի հիմնական նպատակն է հնարավորություն տալ ուսանողներին ամբողջական իրենց երկրի ազգությունների մասնակցելու եւ տեղեկատվական գործընթացների եւ բ՝ զարգացող տնտեսության իրավական հիմքերի ստեղծմանը:

Դիմողները ոչեմ է ունենան **իրավաբանական բարձրագույն կրթություն** եւ անգլերեն լեզվի մասնակի իմացություն: Դիմողները ոչեմ է ներկայացնեն դիմում եւ նեղլիր իրենց ոլորտներում: երեք հրատարակված նամակ: լրացնեն դիմում եւ ֆի նամակական հնարավորությունների մասին տեղեկանք:

Մասնագիտության ընդունման կանխավճարը կազմում է 1000 դոլար: 10 դոլարին հատուցվում դրամ: որը ոչեմ է մուծել վճարումները հանձնելիս: **1997 թ. հուլիսի 23-ը** վճարումների ընդունման վերջնամակերեսն է:

Ոչում դիմողները **1997 թ. հուլիսի 25-ին** կհանձնեն անցկացնեն լեզվի իմացության գնահատում ինքնուրույն ստացատրությամբ այն դիմողների ոլորտ վերջերս TOEFL հանրությունից ստացել են 550 եւ ավելի միավոր: Առաջին փուլով անցած այն դիմողներ: որոնք չեն բավարարի անցկացնեն լեզվի իմացության գրանցումը կնամակցեն **1997 թ.** սեպտեմբերից մինչեւ **1998 թ.** մարտի վերջը ՀԱՀ-ում անցկացվող անցկացնեն լեզվի ստուգարանում ծրագրին: Անցկացնեն լեզվի ստուգարանում ծրագրի ուսման վարձը կազմում է 1000 դոլարին հատուցվում դրամ: Նպաստ հան ծրագիր ընդունվելիք **1997 թ.** հուլիսի վերջին. որոնք դիմողների հետ հարցազրույցներ կանցկացվեն: Դիմողների անձնագրերի եւ հարցազրույցների օրերը կհայտնվեն ՀԱՀ-ում:

Հիմնական ծրագրում վերջ ուսման ընդունելությունը կնշանակի դիմողի մասնակցի գրանցումներ եւ ասպիրանտուրայի վարչությունը դիմողներ ստացարանում ու ասպիրանտության հիմնական վրա: Հիմնական ծրագիր ընդունված բոլոր ուսանողները ոչեմ է ՀՀ կրթության եւ գիտության հանձնարարության հետ ստորագրեն ուսումնական հետ եւ ոչ հասարակական մասին եւ ուսումնական մասին պարտավորագիր:

Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք դիմել ՀԱՀ-ի բնակարանային գրասենյակ. Հասցեն. Մարշալ Բաղրամյան 40: առաջին հարկ. 19 սենյակ. հեռախոս 77-16-39:

ՀԱՀ-ՈՒՆԻ ԱՌԱՆՁԻՆ ԿՐԹԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՈՒՄ ԿԱՆ ԲԱՑԱԿԱ ԽՈՐՀՐԴԱՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՔԻ ՎՐԱ

«ԱԶԳԻՆ» ՏԵՂԵԿԱՏՎՈՒ՝ ՄԻՆՉԵՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՀՈՐՈՇՈՒ ՇՐՋԱՆԱՌԿՈՒԹՅԱՆԵՐԻ ՄԻՈՒՍՈՒՄԸ ԵՎ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ ՕՐՈՒՄ, ՀԵՌԱԽՈՍՈՒՄ 560167, 581351

«Ազգ»-ի խմբագրության հասցեն. Երեւան 24, Մարշալ Բաղրամյան 3, Հեռախոսներ՝ 65, Դասալ 69149, Ռատակտոր 591, Գրանցված՝ 3000, Գրանցվել է տպագրության՝ 3.06.1997, Գինը 100 դրամ